ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 1,164 Կ. ՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ, 1900, ՕԳՈՍՏՈՍ 4—17 22 ՌԷՊ՚ ԻՒԼ ԱԽ՚ 1318 4 ԱՂՔՍԹՕՍ 1316 Դ. ՏԱՐԻ — ԹԻՒ 1,164

"پوزانتیون"
امتیاز صاحبی و مسئول مدیری احمد ابراهیم زاده
پوزانت کچیان
بابعالی جاده سی نمره ۲۳-۲۵ نومرولی دائره ده مسکونه در

20 ՓԱՐԱ

Բիւզանդիոն

20 ՓԱՐԱ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
PUZANTION
Journal Arménien Quotidien, Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddessi, No. 23 _ 25.
CONSTANTINOPLE

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՑԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՑ
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՌՈՒՍԱՀԱՅ ՔՐՈՆԻԿ

ՆՈՐ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժամերզապետութ Ս. Հայրապետին.— Վարդապետ.— Ապրային կաթողիկոս.— Նոր Աբբա ընտրութեան.— Կալվածի կառավարչութեան.— Ընդհանուր ժողով.

ՏՓԼԻՍ, 23 Յուլիսի

Ն. Ս. Օծութիւնն Յլս. 11ին Լօռու գեւառը համբորդութիւն մը կատարեց՝ Մարցի վանքապատկան կալուածները նայելու նպատակաւ։ Այդ կալուածների զառորդ բաժինը մասնաւոր գնատուածատէրերի սեփականութիւն է։ Այս կալուածներ վէճի առարկայ եղած էին վանքի և բաժնատէրերի մէջ, որուն վերջ տալու համար՝ համաձայնութիւն գոյացուցած էին իրենց տեղերն որոշելու և բաժանելու։ Բաժանումը կատարուած էր կալուածատէրերի համար նպատակաւոր կերպով, որովհետեւ վանքի կալուածների կառավարիչը մեծ սխալ գործած էր բաժանման միջոցին։ Հոգեւորականութիւնն իսպառ գործը և յանձնեց դատարանի։ Ն. Ս. Օծութիւնն անձամբ եկեր էր այս բաժանումը քննելու և կալուածների չհոգործման մասին կարգադրութիւն ընելու։ Կալուածների կառավարութիւնն առաջիկայ յանձնուած է Թովմա վարդապետին և օգնական նշանակուած է Գեղամ վարդապետը, Հազարաւի վանքի նախկին վանահայրը։ Մի քանի գիւղատեռները կ'մշակեն կալուածների չահագործման ծրագիրը։ Ն. Ս. Օծութիւնն անձամբ քննելով գործը, համոզուած է որ բաժանման միջոցին տկներև անարդարութիւն են կատարել։ Բաժնետէրերը կալուածի լաւ մասերն իրենք առած էին։ Մէկ օր ամբողջ կալուածները պտըտեցէն յետոյ, Յլս. 13ին ճանապարհ ելաւ դէպի Դսեղ։ Բաւական երկար ժամանակէ իվեր էր որ Լօռու գիւղերը կաթողիկոս չէր այցելած։ Դսեղում հաշեց և յետոյ քահանաների և ժողովրդեան ուղեկցութեամբ Շահալի գիւղն երթալով՝ այնտեղ գիշերեց։ Այցելած գիւղերը Ս. Հայրապետն իջնելով ձիէն, կ'մտնէր եկեղեցիներն և ուշադրութիւն կ'դարձնէր եկեղեցական նիւթիւններուն վրայ և կ'պատուիրէր քահանաներուն որ լաւ պահպանեն։ Միւս օրն առաջ 14ին Շահալուի հասարակութիւնը ճանապարհ դրաւ դէպ ի Ղարաքիլիսէ։ Ղարաքիլիսէ չմնալու չէր, պիտի անցնէր Համամլը։ Ն. Ս. Օծութիւնն ամբողջ օրը կ'ճանապարհորդէր ձիով, չնայելով իր ծերութեանը, եւ երբեք յոգնութիւն չէր զգար։

Լօռու ժողովուրդը խնդրեց Ս. Հայրապետէն որ վարձատրէ Կուրապն ծխատէր ծերունի եփրեմ քահանայ Տէր Դաւիթեանցն և Շահալուդ գիւղի ծխատէր Տէր Պօղոս Ռամազեանցը։ Կաթողիկոսն ուղեկիցներն էին Բարթողիմէոս ու Կորիւն վարդապետներն և իր դիւանատան մի պաշտօնեան։

*** Մարգարաքերի (այսինքն՝ Բեդերսպուրկի և Մոսքուայի) եկեղեցիներէ պատուաւոր հոգաբարձու Աբամելիք Լազարեան, 20 հոգի Թոշակաւոր պահելու համար գումար մը նուիրեր է Լազարեան շէնարանին, Թոշնելով Թոշակաւորները Կաթողիկոսին իրաւունքն Հայոց կաթողիկոսին, այն պայմանով որ անոնք ընտրուին քահանաներու զաւակներէն։

***

ՄԻ ՏԽՈՒՐ ԻՐԱՂԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Նոր—Բայազիտից 10 վերստ հեռաւորութեան վրայ դէպ ի հիւսիս Յլս. 1ին Բէլդայի գիւղացի Եղո Մահտեսեանի կին՝ Շուշանը, իր երկու աղջիկներով, առաւօտուն կանուխ Ագտաղի լեռների կողմը, Արծրունի ընտանեաց խոտատեղը վայրի բանջարեղէն հաւաքելու համար։ Երբ բաւական կ'հեռանան գիւղէն, Շուշանը տուն կ'վերադառնայ իր հետ բերելով ժողված և մաքրած մանդակը։ Մօր հեռանալուց յետոյ երկու քոյրերը՝ մեծը եղիսաբէթը, 21 տարեկան, և փոքրը՝ 13 տարեկան՝ կ'շարունակէն մանդակ ժողվել, պէտք է ասել որ ոչ շատ ժողվէր, նա մօր երկու աչքերը կ'լիներ. այդպէս է ասել Շուշանն իր աղջիկներուն։ Այդ պատճառով իրաքանչիւր քոյրը կ'աշխատին որքան կարելի է շատ ժողվել և մասամբ մ'ալ իրարմէ խլելով։ Սօփիան յանկարծ կ'գտնէ շատ և հասունցած մանդակներ, եղիսաբէթը չտապով ձեռքէն խլել կ'ուզէ որ իր բաժինը թէ՛ շատ և թէ լաւ ըլլայ։ Տեսնելով որ չի կրնար դէմ դնել եղբայրթին, Սօփիան կ'խածնէ ձեռը ձեռքն և կ'հեռացնէ։ Այդ միջոցին կը հայհոյէ Սօփիան իր քրոջը, թէ նա ազախին է իրանց գիւղացի Պետոյեան Թադոսի տունը, թէ նա լիրբ և լկտի է։ Մէկ կողմէն այս կծու խօսքերին և մէս կողմէ խածուած ձեռքին ցաւը կ'բարկացնեն եղիսաբէթը, որ մեծ քար մը կ'նետէ Սօփիային։ Դժբախտաբար քարը գլխուն կ'զայ և Սօփիան գետին կ'իյնայ։ Տեսնելով որ քոյրը մեռնելու վիճակի մէջ է, կասկածի տեղի չտալու համար, դանակով կ'սկսի վիզը կտրել, և կուրծքը մէկ քանի տեղէն ծակոտել և այսպէսով սպաննել, և ինքը կ'վերադառնայ տուն։ Մայրը կ'հարցնէ թէ ո՞ւր է Սօփիան. նա կ'պատասխանէ թէ իրմէ առաջ եկաւ։ կ'որոնեն և դիակը կը գտնեն, եղիսաբէթ կ'ուրանայ ըսելով թէ տեղեկութիւն չունի թէ՛ւ սպաննած է։ Երբ կ'սկսին ծեծել, կ'խոստովանի ինք սպաննած ըլլալը, պատժելով եղելութիւնը։

***

ԴԱՏ ՌՈՒՄ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՄԸ ԴԷՄ

Այս օրերս Բեդերսպուրկի դատարանն հետաքրքրական դատ մը կը տեսնէ։ Բաղաքային հիւանդանոցի մէջ Պ. Ի. տեղային ցնորման մէջ հաներ է իր աչքերն և բոլորովին կուրցեր է։ Դուրս եղնելով հիւանդանոցէն, դատ կ'բանայ հիւանդանոցի պաշտօնեաներուն դէմ, մեղադրելով զանոնք որ պէտք եղած հսկողութիւնը չեն ըրեր իր վրայ այդ տենդային ցնորման ժամանակ, և պահանջելով 5,600 րուպլի իբրև փոխարինութիւն իր կորցուած աչքերուն։ Նահանգական գատարանը վճռել է յօգուտ այս Ի.ի, որոշելով որ հիւանդանոցի պատասխանատու պաշտօնակատարները տան նմա մինչ ցմահ ամիսը 40 րուպլիս։

ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՌՈՒՍԱՀԱՅ ՕՐԱԹԵՐԹԻ ՄԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԷՆ ՎԱՃԱՌ ՀԱՆՈՒԻԼԸ

ՏՓԼԻՍ, 22 Յուլիսի

Ամռոյս սկզբներն երբ առաւօտուն լրագիրն ծանօթացայ յանկարծ յայտարարութիւններէն մին աչքիս զարկաւ որ դատարանի կողմէ վճռուած էր, այն է՝ լրագրին արտօնութիւնն ամերդի դնել, երեք հազար րուպլիի փոխարէն, որ պարտական է եղեր տպագրատիրոջ, որ դատ բացեր ու դատը չահեր էր, առանց արտօնագրը դատի ներկայանալու։ Վաճառումը տեղի պիտի ունենար Յուլիս 14ին։

Երբ այսպիսի մի յայտարարութիւն առաջին անգամ րլլալով կարդացի, զարմանքը զիս պատեց. արդեօք սխալ էր կարդացածս, կամ թէ՝ ո՞ւ միտքը չէի հասկնար։ Կրկնեցի երկրորդ անգամ. ո՛չ, նոյնն էր, ինչ որ հասկցած էի. ինքնիրենս սկսայ խորհիլ թէ արդեօք կարելի՞ բան է լրագրի մը արտօնութիւնը ծախել. վասն զի ո՛չ կալուած էր և ոչ տան աւերուրդ կամ կարասի, այլ բարձրագոյն հրամանաւ նուիրեալ չնորհ մը, որ հանրութեան և երկրին զարգացման ծառայէ։

Հարկ էր սպասել այս խնդրոյն ելքը տեսնելու թէ ի՛նչ կերպով պիտի վերջանայ. արտօնատէրը պիտի կըրնո՞ր իր թերթին արտօնութիւնը ձեռքէ չհանել, վճարելով երեք հազար րուպլին, թէ տասնեւօթն տարի տուած աշխատանքն և ըրած գոհողութիւնները յօդս պիտի ցնդէին,—բան կէտն այս տեղ էր։

Հետեւեալ առաւօտ երբ ստացայ թերթը, առաջին երեսի մէջ կարդացի թէ Տէօրէն—Մրազիրը իր կողմէ ցած կ'յայտնէր Տպարանատիրոջ դէմ և կ'ըսէր թէ ո՛չ թէ պարտք ունի՛մ, այլ իրմէ տպարէն պահանջ ունի՛մ։ կ'իմանանք թէ մէկերնին պայմանագրութիւն մը կայ եղեր կնքուած, եւ ամէն փող վճարելուն, տպարանատէրն ատոր հետեւ կ'ատորգրէ եղեր որչափ փող առնելը թուականով։ Այդ պայմանագրութիւնն արտօնատէրը կորնցուցած ըլլալով, տպարանատէրը կը յանդգնի դատ բանալ, ըսելով թէ այսչափ ժամանակէ ի վեր տպած թերթերուս վարձքը չեմ ստացած, բայց այդ պահանջած ժամանակամիջոցին մէջ, առանձին թուղթերու վրայ ստացագիրներ ունի տուած, որ ստոնք նկ ստորագրութեան չէ առեր, կարծելով թէ անոնք ալ կորուսած են. ուստի այս ապացոյցներն ունենալով վճարած ըլլալուն՝ արտօնատէրը կ'բողոքէ և գործը Սէնատին (Մերակոյտին դատական վճռաբեկ ճիւղն, որ ի Բեդերսպուրկ) կ'յանձնուի։

Բաղաքիս մէջ երկու օրական թերթերու կուսակիցներ անհամբեր Յլս. 14ին կ'սպասէին, և օրուան խօսակցութեան նիւթ եղած էր այս բանը, թէ ի՛նչպէս պիտի ծախուի յիշեալ հայ օրաթերթը։

Յուլիսի 14ին. վաքսունէն աւելի անձինք կ'դիմեն աճուրդի տեղը, մանաւանդ հետաքրքրուած ժողովուրդ կոդմէն էր, իսկ մեացեալները չէկան, և իմանալով յետագծիլը, ձեռնունայն ետ կ'դառնան։

Յուլիս 15ի առաւօտուն երբ ստացայ թերթերը, կարդացի հետեւեալն որ արտօնատիրոջ կողմէ գրուած էր։

«Յուլիս 14ը, վաճառման օրը, անվտանգ անցաւ. թերթիդ խմբագրի՝ յուլիսի 13ին նահանգական դատարանի տուած խնդրագրին և տուած բացատրութեան հիման վրայ՝ նահանգական դատարանն առաջին որոշումով, թերթի հրատարակութեան իրաւունքն ջրելիոյ աճուրդի հանելը ցնոր անօրէնութիւն և խմբագրին տուած կատարողական թղթով, պատուիրեց դատարանին պրիստաւին [քոմիսէր, կամ իմա մէմուրու] ի կատար ածել դատարանի այդ որոշումը։

«Աճուրդի մասնակցիլ ցանկացողներուն յայտերն ի դերև ելան։

«Տպարանատիրոջ անիրաւացի պահանջը դատարանական ծախքերի և տոկոսներուն հետ անուս է 3183 րուպլի։

«Ամենայն դէպս՝ խմբագրութիւնս այդ գումարն ամենեւին միտք չունի տպարանատիրոջ տալու, այլ կ'յանձնէ, երբ միջոց լինի, արքունական դանձարանին, որովհետեւ դատարանի վճիռը անարդար է համարում և դիմելու է Սենատին։»

Իմացածիս նայելով, յիշեալ թերթի կուսակիցները թէ՛ քաղաքէս և թէ գաւառներէն, հեռագրով և նամակներով, վճարելիք փողին մէկ—երկու պատիկը դրկեր են, քաջալերելով պնդելը, որ թերթը ձեռքէն չհանէ։ Տեսնելով որ հարկ չկայ վճարելու, չնորհակալ ըլլալով ետ դարձուցեր է։

Արդեօք ո՞րչափ պիտի ուրախանար հայասէր կողմը, որ պատրաստ կեցած էր անխղճաբար մէկզմէկ չնորհնաւորելու, և նորա տասնեւօթն տարի անխոնջ աշխատանքն և ըրած գոհողութիւնները յօդս պիտի ցնդէին։

ԶԱՆԱԶԱՆ ԼՐԱՐԵՐ

Ս. էջմիածնի սինոդի պրոկուրոր Պ. Կանչկին արձակուրդ է ստացել մի ամիս ժամանակով։

*** Յուլիս 10ին, ցերեկուայ ժամը 3ին, Շամախի երկրաշարժ եղաւ հիւսիսային ուղղութեամբ. ցնցումը բաւականին ուժեղ էր։ Կէս ժամից յետոյ այսինքն 3½ին, ցնցումը կրկնուեց, բայց առաջուանից թոյլ։ Երկրաշարժը բարեբախտաբար ոչ մի վնաս չհասցրեց։

*** Ս. Հայրապետին յուլիսի 2ին հաղորդին մեկնելիս Միթրանութիւնից մի քանի հոգի ուղեկցեցին մինչև երեւան։ Ն. Ս. Օծութիւն կը մնայ Հաղարծին մի չաբաթից աւելի, ապա, եթէ հանգամանքները նպաստեն, կը շրջի և Հաղարծնին մօտակայ գիւղերը և նոյն իսկ վանական մի քանի կալուածները։ Այնպէս որ կարծւում է մօտ մի ամիս բացակայ կը մնայ Ս. էջմիածնից։ Ն. Ս. Օծութեան ուղեկցում է Բարթողիմէոս վարդապետը։

—Յունիսի 29ին, Ս. Թարգմանչաց տօնի օրը՝ ձեմարանի աշակերտներն ընդունուած սովորութեամբ գնացել էին Օչական Ս. Մեսրոպի գերեզմանին ուխտ։ Հանդիսաւոր պատարագ եղաւ։ Ներկայ էր Ս. Հայրապետը և մի երկու հոգի էլ վանքի միաբանութիւնից։ Պատարագիչն էր Նաչիկ վարդապետը, որ ծանր էր կատարում խորհուրդը. պատարագը չատ ուշ վերջացաւ, ապա մի երկար և ձիգ քարոզ։ Բարոզիչը կարապետ վարդապետն էր յանդիմանեց գիւղացիներին, որ մատաղ չեն մորթել, որ բոլոր չորկայ գիւղերից չեն եկել այն մեծ ծօնին, մանաւանդ որ ազգիս Հայրապետն էլ ներկայ է։

*** Նաչիկ վարդապետը Զատրթունց եկեղեցու փլատակներից հանել է մի ահագին քար՝ արձանագրութեամբ ծածկուած։ Քարը 3 արշին երկարութիւն ունի և մի արշին լայնութիւն, ամբողջովին ծածկուած սեպագիր գրերով, որը կտրուել է, որից և չատ քիչ պակասել են և գրերը. մէկ էլ պակասած են երեւում տարին տեղերը։ Անչուշտ քարը բերուած մի այլ տեղից և իբր պատրաստի նիւթ գործածուած է չարուածքի մէջ, հաւանականաբար սեան մէջ, իսկ թէ եկեղեցին խոնարհուելու ժամանակ քարը կտրուել է, թէ կտրուած է եղել, դժուար կարելի է մի բան ասել։ Պեղման ժամանակ գտել են և մի այլ արծիւ, բայց աւելի փոքր, առաջուանից աւելի նուրբ, թէև առաջինի վիճակն ամենեւին տպաւորութիւնը չունի։ Պեղումը դանդաղ է առաջ գնում, հակառակ մինչև խոր աշուն ամբողջն ամբողջ աւարտուի, թէև վարդապետը մինչև սպասուածքեր ամէն բան աւարտելու յոյս ունի։

*** Կովկասի կառավարչապետը թոյլ է տուել այս տարի կայսերական համալսարաններին և միւս բարձրագոյն դպրոցներում կովկասեան թոշակաւոր նշանակել 20 հոգու, որոնցից 3ը հայ են։ դրանք են՝ 1) Կուսիկեան Աբշակ, աւարտել է Թիֆլիսի առաջին գիմնազիոնը ոսկէ մեդալով, թոշակաւոր է նշանակուած նոյն համալսարանում, և 3) Տէր-Պողոսեան Աբմենակ, աւարտել է Երեւանի գիմնազիոնն արծաթէ մեդալով, թոշակաւոր է նշանակուած նոյն համալսարանում։

*** Ս. Հայրապետը յուլիսի 2ին երեկոյեան ուղեւորուեց Երեւան, որտեղից պէտք է գնայ Հաղարծնի վանքը, որի նորոգութեանն արդէն ձեռնարկել է և, ինչպես լսում է, մօտ 4000 րուբլի կարող է ծախսուել։ Նորոգելուց նաև անցեալ տարի Սազմոսաւանքը, որը նոյնպէս 4000 ր. նստեց, բայց այսօր գարձեալ նոյն աւերակի ապատւորութիւնն է թողնում տանց վանահօր։ Այսքան ծախսեր լինում են մասնաւոր վանքերի նորոգութեան համար, մինչ մայր Աթոռը մնացել է աննախանձելի դրութեան մէջ, ապա-

տակ գանձով ծեփած և գիւղական հասարակ եկեղեցուց էլ դեռ աւելի վատ տպաւորութիւն է թողնում նեռս մտնողի վրայ։

*** Հրապարակած է Մատթէոս վարդապետին գնալ Շուշի առաջիկայ Յունիսին։ Ջարմանալի է, թէ ինչ գործ ունի Շուշի, քանի որ ամբողջ տարուց աւելի է թողել Շուշին և այժմ ուրիշ պաշտօն է վարում։ Իրենց պաշտօնն ու գործը թողած այս ու այն կողմն են թափառում չարունակ։ Ըլքան անհոգութիւն եկեղեցական բարձրագոյն իշխանութեան կողմից։

*** Յուլիսի 3ին նոր Նախիջեանի Աղքատաց հոգաբարձութիւնը քաղաքին աղքատ դասակարգից ընտրեց վեց աշակերտ, որոնք ուսում տիտ տանան Գասպար Պապովի կտակած փողի տոկոսով։

*** Կանանց ծխական հոգաբարձութիւնը Նոր Նախիջեանի մէջ յուլիսի մէկից իրաւունք ստացաւ հաստատելու Ս. Նիկողոս եկեղեցու տան մէջ։ Այս տեղ հոգաբարձուհիներն սկիզբ դրին աշխատանոցի, գնեցին գուլպայ գործելու երկու մեքենայ որով զբաղուած են չորս աղջիկ, բոլորն էլ ամենաչքաւոր ընտանիքներից։ Նոյն տեղից հոգաբարձուհիները բաժանում են աղքատ ընտանիքներին կար (վերջակներ. խալաթներ, զգեստներ և այլն։)

ՊԱՒԱՔՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Պաս. Լրագրոյդ 1141 թիւ թերթին մէջ գարակէօմրիւթի Ս. Յովհան Ոսկերբերան եկեղեցւոյ հոյլ ճարակ ըլլալուն առթիւ յօդուած մը գրուած էր, որուն մէջ չահեկան տեղեկութիւններ կային։ Բայց նաև ըսուած էր թէ սուրբայարկի դուռն իր լաստին տառերով և յունական արձանագրութեամբ 200 տարուան հնութիւն ըլլալ կ'կարծուի, մինչ հայերէն արձանագրութիւնք աւելի նոր են։ Ջեր տեղեկաբերը չփոթեր է երկու գրացի եկեղեցիները։ Պատմական դուռն ո՛չ թէ Գարակէօմրիւթի եկեղեցին կ'գտնուի այլ Պալաթու Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մայր տաճարի կողմանի միակ դուռն է, որ իտես կ'տեսցեն ներսացիք չատ անգամներ և որուն արժէքը չեն կրցած գնահատել։ Աւանդութեամբ կ'պատմուի թէ նոյն դրան ծանրութեանը չափ ոսկի տալ առաջարկած են ներսացիք, բայց նոյն առենուան եկեղեցապանները չեն յօժարած տալ (*), իբրև հնութիւն մը և մայրաքաղաքիս մէջ եղող մեր Ազգին յատուկ ժամեսատաչին եկեղեցւոյ իբրև նշանակ, որ փոխարերած է Ս. Նիկողայոս անուն եկեղեցին։ Մեծանուն Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ Բ. 1450 թուին երբ Պոլիսն առաւ

(*). —Ակնկիռը խօսի այն կարգ մը Թաղական ազատերուն որք եկեղեցին անգամ կ'ծախեն վարձարանաց բացը գոցելու պատրուակաւ, աչքնալով պարզապէս ըսելու թէ իրենց ծակ քակնելու կարկատան ընելու համար է։

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆԻ» [77]

ԿԱՍՏԻՄ

ԲԱԽՏԱԽՆԴԻՐԸ

Գ.

—Շատ յուզուած կ'տեսնեմ զքեզ, Բարունակ, քիչ մը պազ արիւնով խորհէ՛, տես ի՛նչ բաներ կ'խօսիս, յարեց Կանթեղեան։

—Զուտ ճշմարտութիւն է ինչ որ կ'խօսիմ։

—Չի՞ կրնար պարզ նմանութիւն մ'ըլլալ. ես կ'սիրեմ զքեզ, Բարունակ, կ'ցաւիմ քու արդի կացութեանդ վրայ, խնդալս կուգայ տիեղտիեղ յայտնութիւններդ ու ենթադրական գիւտերդ լսելով, անոր համար ներողամտութեամբ կ'վարուիմ։ Հնդկաստանի ժառանգութիւնները գիտես, քանի՛ քանի մարդիկ փճացան երեւակայական հաշիւներով ու ենթադրական ազգականութիւնով։ Անոնք միւնչեւ մէկ աստիճան մեղադրելի չէին, քանի որ անձնօթի մը, մեռելի մը, ազգականի մը տէր կ'ելնէին, իսկ դուն, իմ կենդանութեանս, ինձ իսկ հաւատացնել կ'ուզես որ ես քու հարդ եմ, դուն ալ իմ զաւակս։

—Ճիշդ որ այնպէս չէ, եւ ո՛չ առնեմ խօսքս, սխալած եմ, դուք հարս չէք. Թաւշ չէ՛ ձեր նախկին անունը, ժուռնացած չէ՛ք ի... գիւղաքաղաքին մէջ, սպանած չէ՛ք Մարգարը, սի ալեց-յ դուք բաժին չունիք ասոնց նիս զիս, աղէկ, դուն ալ զաւակս ես, բայց ո՛չ քու կարծածիդ պէս մարդասպան մը զաւակը։

—Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, եթէ չէք հաւատար որ ձեր զաւակն եմ ես, ինչո՞ւ ընդունիք։

—Առարկութիւն մի՛ յարուցաներ խօսքերուս դէմ. կ'հաւատամ որ զաւակս ես, ըսելիք ունի՞ս, ո՞վ չի ցանկար քեզի պէս զաւակ մը ունենալ։ Բայց ամէն գործի մէջ պէտք չէ հապճեպ ու գահավէժ գործել, այսօրուընէ իսկ զաւակս ես, հարստութիւնս կառավարելու հոգը քեզմէ ազէկ ձեռքի մը չէի կրնար յանձնել, Աստուծմէ եղաւ այս։

—Տեսէ՛ք, մինչեւ հիմայ չէի գիտեր ես այս պարագան, գուցէ կամարեան ալ չէր գիտեր, հակառակ պարագային բնականաբար պիտի չյօժարէր վաճառատունէն ներս մտցնել մշակ մը զաւակը։

Բարունակի կատաղութիւնը չափ սահման չունէր այլ ևս։ «այս ի՞նչ ժըպիրհ լրբութիւն» կ'ըսէր, հօրը սրբացումն ու կեղծ բարեյականը տեսնելով։

—Այդ մասին հոգ մի՛ ընէք, կանթեղեան էֆ., ըսաւ, քանի որ ձեզի պէս ոճրագործներու չարգ պատիւ կ'ընծայեն, ինձ նման անմեղ մը երբեք պիտի չանարգեն։

—Ինչպէս որ ըսի, ներող միաքով կ'դատեմ քու յուզումդ, զրգռումի խօսքերդ. միւս կողմէ, ես հարստութիւնն ունիմ պէտք եղածէն աւելի, չեմ ուզեր յուսալաբ ընել զքեզ այս նորաբոլորով հասակիդ մէջ, հայր կ'ընդունուի այնպիսի սիրալիր չէչտերով, հառաչներով սկսաւ խօսիլ որ Բարունակ ազդուեցաւ աստիճանաբար ու սկսաւ արտասուել։

—Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, եթէ չէք հաւատար որ ձեր զաւակն եմ ես, ինչո՞ւ ընդունիք։

—Առարկութիւն մի՛ յարուցաներ խօսքերուս դէմ. կ'հաւատամ որ զաւակս ես, ըսելիք ունի՞ս, ո՞վ չի ցանկար քեզի պէս զաւակ մը ունենալ։ Բայց ամէն գործի մէջ պէտք չէ հապճեպ ու գահավէժ գործել, այսօրուընէ իսկ զաւակս ես, հարստութիւնս կառավարելու հոգը քեզմէ ազէկ ձեռքի մը չէի կրնար յանձնել, Աստուծմէ եղաւ այս։

Ա.յսպիսի հայր մը չէր երազեր սակայն Բարունակ. գործակից, սրտակից եղ ընդունելութիւն մը կ'փնտռէր հօրը բազուկներուն մէջ և հիմա կանթեղեանի այս չոր ու ցամաք խօսքերուն հանդէպ փոխանակ ուրախանալու, հրճուելու, լուռ ու տխուր կը խորհրդածէր։

—Մէկուց մը պիտի խորհիլ քեզի հետ, յարեց վաճառականը, բնական մէկուց մը որ երբէք կասկած չհրաւիրէ ու ամէն մարդ արդարացի տեսնէ մեր հայր և որդիութիւնը. Սմբատէն յոյս չունիմ, անոր քառաքթէքը գիտես, խոհանոց մ'իսկ չի կրնար կառավարել։ Աստուած երեսս նայեցաւ, ուրախ եմ, վերջին ծայր ուրախ այս միջադէպէն, զաւակս ես, Բարունակ, դուն պիտի յաւերժացնես կանթեղեան անունը։

Վաճառականը հետզհետէ յուզուելով՝ բոլորովին փոխեց իր ձայի ոճն ու այնպիսի սիրալիր ձեւերով, հառաչներով սկսաւ խօսիլ որ Բարունակ ազդուեցաւ աստիճանաբար ու սկսաւ արտասուել։

—Աւա՛ղ, բացագանչեց, այսչափ տառապանք քաշելէ ետքը, քիչ մը պիտի չխնա՞յ մայրս, Աստուա՛ծ իմ։

Իսկ կանթեղեան Բարունակը ճամբու դնելէ ետքն սկսաւ տանջուիլ։ Խնդիրը ծակած էր. սոսկալի կինը ի՞նչպէս պոլիս ինկած, երեսուն տարի վերջ ի՞նչպէս ճանչցած էր զինք։ Փրկութիւն չկար ալ։ ուշ կամ կանուխ տեղէ մը ծայր պիտի տար փոթորկին ու հիմնայատակ պիտի կործաններ հսկայ չէնքը, զոր հազարումէկ դարձուածներով ու խելքէ մտաք վեր ճարպկութիւնով հազիւ յաջողած էր հիմնել կանթեղեան փառապանծ տիտղոսին տակ։

«Թախտախնդիրն» հիմակուընէ իսկ փճացած կ'նկատէր ինքզինք, նիւթապէս ու բարոյապէս։ Կրկնամուսին և մարդասպան, այս երկու բառերը չարունակ չէրնան կ'ընէին յոգնած, դադրած, պարտասած ուղեղին մէջ, որ կարծես կորսնցուցած էր իր նախկին գործունէութիւնն ու բոլորովին բըթացած։

Պահ մը յուսահատեցաւ կանթեղեան, անզօր կ'զգար ինքզինք այս տանկնկալ վտանգին դիմագրաւելու։ Արդարեւ քիչ մը դրամ տալով Բարունակը լռեցնել դժուար գործ չէր, սակայն եթէ նախկին ժուռնացին ուրիշներու ալ ընէր այս խոստովանութիւնը, և կամ եթէ նոյն իսկ Բարունակ ոեւէ առիթով բերնէն փախցնէր թէ կանթեղեան իր հայրն է, այն ատեն անցուց հաշուակալը, ու երբ տուն հասաւ՝ բաւական ծանրցած գտաւ հիւանդին վիճակը։

—Աւա՛ղ, բացագանչեց, այսչափ տառապանք քաշելէ ետքը, քիչ մը պիտի չխնա՞յ մայրս, Աստուա՛ծ իմ։

Իսկ կանթեղեան Բարունակը ճամբու դնելէ ետքն սկսաւ տանջուիլ։ Խնդիրը ծակած էր. սոսկալի կինը ի՞նչպէս պոլիս ինկած, երեսուն տարի վերջ ի՞նչպէս ճանչցած էր զինք։ Փրկութիւն չկար ալ։ ուշ կամ կանուխ տեղէ մը ծայր պիտի տար փոթորկին ու հիմնայատակ պիտի կործաններ հսկայ չէնքը, զոր հազարումէկ դարձուածներով ու խելքէ մտաք վեր ճարպկութիւնով հազիւ յաջողած էր հիմնել կանթեղեան փառապանծ տիտղոսին տակ։

«Թախտախնդիրն» հիմակուընէ իսկ փճացած կ'նկատէր ինքզինք, նիւթապէս ու բարոյապէս։ Կրկնամուսին և մարդասպան, այս երկու բառերը չարունակ չէրնան կ'ընէին յոգնած, դադրած, պարտասած ուղեղին մէջ, որ կարծես կորսնցուցած էր իր նախկին գործունէութիւնն ու բոլորովին բըթացած։

Պահ մը յուսահատեցաւ կանթեղեան, անզօր կ'զգար ինքզինք այս տանկնկալ վտանգին դիմագրաւելու։ Արդարեւ քիչ մը դրամ տալով Բարունակը լռեցնել դժուար գործ չէր, սակայն եթէ նախկին ժուռնացին ուրիշներու ալ ընէր այս խոստովանութիւնը, և կամ եթէ նոյն իսկ Բարունակ ոեւէ առիթով բերնէն փախցնէր թէ կանթեղեան իր հայրն է, այն ատեն

(Շար.)

Ցունաց ձեռքէն, իրեն հետ Պրուսայէն և իր շրջականներէն 7 տնուոր Հայեր բերաւ մայրաքաղաքս և հաստատեց մասնաւոր թաղեր որք կոչուած են ՆԷՏԻ ՕՏԱԼԱՐ, 3 օտալար՝ Գարակէօմրիւքի շրջակայքը ՄԱԼԹԱ անուամբ, մէկ օտալար ՉԱՐՇԱՄՊԱ, մէկ օտալար Սամաթեաբուբ՝ ՏԻԼԷՆՃԻ անուամբ և երկու օտալար Արբահը Պագալ։ Այս եօթը տնուոր Հայեր հոգեւոր մխիթարութենէ չզրկուելու համար կ'ուզէին աղօթատեղի մը ունենալ։ Մայր աստիճան թախանձանքէ յետոյ Ն. Կայս. Վեհափառութիւն բարեհաճեցաւ Հայոց շնորհել Ցունաց ձեռքէն գրաւուած՝ և Պալաթու բարձունքը գտնուած Թէքիր—Սէրայի (*) վերեւ Բիթթալ Համամի թաղին մէջ Ս. Նիկողայոս անուն եկեղեցին։ Ահա այս սրբավայրն է որ 3—400 տարիներու հնութիւն մ'ունի և ուրկէ տեղափոխուած են վերեւ յիշուած պատմական դռներ։ Այդ դռներու վրայ փորագրուած լատին գրերէն կ'հետեւցնենք թէ Լատինք ալ այդ տեղ պաշտօն և պատարագ մատուցած են և ի նշան իրենց գոյութեան սոյն դուռը նուիրած են յիշատակագրելով բուն Լատին լեզուաւ։ Ցետոյ Ցոյնք տիրացած բայց ի վերջոյ քշուած են, թողլով միանգամայն այդ հնութեանց գոհարն եղող կրկին դռներն, որոց մէկ փեղկին վրայ պատկերացած են Եղիա Մարգարէի հրեղէն կառքերով երկինք բարձրանալն և Քրիստոսի՝ խարազանով Երուսաղէմայ Ս. Տաճարէն սեղանաւորներն ու աղաւնեվաճառներն արտաքսելը։ Միւս փեղկին վրայ ալ Գաբրիէլ հրեշտակապետի փող ի ձեռին մեռեալներն արքայութիւն հրաւիրելը կ'ներկայացուի։ Ս. Նիկողայոս եկեղեցին դարերով հազարաւոր բարեպաշտներու աղօթատեղին եղած է։

Դարձեալ Հայք՝ որպէս զի չմնան առանց եկեղեցիի, կրկին խնդրամատոյց եղած են։ Պալաթու արդի Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին, որ Ցունաց կ'վերաբերէր, ամենաչնչին գումարի մը փոխան թողուեցաւ կայսերական կառավարութեան։ Հայք իրենց սովորական բարեպաշտութեամբ, և սուրբ հաւատքով առգորուած, անմիջապէս իրենց մէջ կ'հաւաքեն այդ գումար և կ'ներկայացնեն յառա Օգոստափառ Կայսեր և կ'արտօնուին բացարձակ հրովարտակով տիրանալ սոյն սրբավայրին 1631ին՝ ըստ յիշատակարանի Երուսաղէմայ Գրիգոր (Պարոնտէր) Պատրիարքի և 1636՝ ըստ Երեմեայ Չելէպիի ժամանակագրութեան։ Սոյն եկեղեցին Հայոց յանձնուելուն պէս նորոգուած է ի հիմանց, 'շնորհիւ Երուսաղէմայ Գրիգոր (Պարոնտէր) Պատրիարքի, Արիստակէս վարդապետի և Պոլսեցի Տիվրիկցի Աստուածատրին։ Սոյն եկեղեցւոյ շինութենէն շատ տարիներ յետոյ շինուած են Գում-գափու Ջինիլի Համամ թաղը՝ Ս. Սարգիս Եկեղեցին ու Հիսար Տիպիի Ս. Նիկողայոս Եկեղեցին, որք կ'այրին 1660 թուականին և որոց հետքերը բոլորովին կորսուած են։ Այս թուականէն վերջ հետզհետէ կառուցուած են Սամաթիոյ Ս. Գէորգը, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը, և Գումգափուի Մայր Եկեղեցին։ 98 տարի յետոյ կ'այրի Ս. Հրեշտակապետ Եկեղեցին (1729) ու կ'վերաշինուի անմիջապէս Ցովհաննէս Կոլոտ Պատրիարքի օրով։ 75 տարի յետոյ վերջին անգամ կ'նորոգուի (1835), ինչպէս կ'երեւի հետեւեալ արձանագրութենէն որ տաճարի դրան վրայ քանդակուած է. «Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Ս. Տաճարս արդեամբ Ազգիս Հայոց, ի Պատրիարքութեան Տեառն Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի. յամի Տեառն 1835 Սեպտեմբերի 7»։ Այս տաճարի դրան վրայ, Գաբրիէլ Հրեշտակապետին պատկերը զետեղուած է, որուն համար կ'պատմուի թէ իր զօրութեամբ եկեղեցին շատ նեղ պարագաներէ փրկած է։ Մայր տաճարին մէջ կ'գտնուի դատաստանի պատկեր մը որ իր հնութեամբ շատ նշանաւոր է և որուն մէկ նոր օրինակն ալ տեսած եմ Արմաշու ուխտագնացութենէ վերադարձիս Պարտիզակի Ս. Եկեղեցւոյ պահարանին մէջ կախուած։

Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ մէջ կայ Դպրաց դաս մը, որ իր հնութեամբ ու եկեղեցական արարողութեանց ներդաշնակ ու միօրինակ երգեցողութեամբ շատ համբաւ վայելած է։ Դպրաց դասուն մէկ ու կէս դարէ աւելի առաջ հաստատութեան թուականը վաւերական կոնդակներով արձանագրուած է։

Ահաւասիկ Դպրաց դասու գլխաւոր ներկայացուցիչները, որք հաստատութեան անվթար պահպանութեանը սատար կանգնած են։ 1. Կարապետ աղա Պաղտատլեան՝ ութսունեան, ալեւոր, պատկառելի, պարթեւ հասակաւ, ջերմեռանդ ու վառ սրտով, հակառակ իր տկար կազմին՝ մեծ և հանդիսաւոր օրերու մէջ կ'նախագահէ հսկելու համար երգեցողութեանց ներդաշնակութեան։ 2. Տ. Վահան քհնյ. Գրիգորեան, հակառակ իր եօթանասուներկու տարեկան հասակին, երիտասարդական վառ սիրտ մը ու եռանդուն կորով մ'ունի. ինքն անվհատ աշխատութեամբ աւելի քան վաթսուն երկար տարիներ նշանաւոր հին երաժիշտներէ— որք են տիրացու Ցովհաննէս Մինէճեան, տիրացու Գաբրիէլ Երանեան ու որդի Դպրաց Դասու նահապետ յարգելին տիրացու Կարապետ Պաղտատլեան — ուսած, ուսումնասիրած և վերջապէս մտադրած է իր սովորածը ձայնագրելու դժուարին գործն ի գլուխ հանել և յաջողած ալ է մի մինակ։ Տ. Հօր միակ բաղձանքն է իր ձեռագիր աշխատութիւնը տպագրեալ ի լոյս հանել։ Այս գործ կ'սպասուի Պալաթու Դպրաց Դասէն, որուն համար, ինչպէս վերեւ ըսի, շատ հոգ ու խնամք տարած է։ Համոզուած կ'ըսեմ թէ արդի դպրաց խումբն իրմով և իր հանդիսապետ ու նախագահ տիրացու Կարապետ աղա Պաղտատլեանով կ'պարծի ընդ միշտ։ Այս երկու ներկայացուցիչներէ զատ պատուական անդամ կ'նկատուին տիրացու Ալիքսան Տ. Սարգիսեան, տիրացու Մանուկ Ցակոբեան ու տիրացու Միքայէլ Պիլալիկեան որք իրենց կարգին Դպրաց դասու գոյութեան մեծ զօրավիգ են և երեցագոյն անդամ կ'կոչուին։

ՄԿՐՏԻՉ Ց. ՊԻԼՊԻԼԵԱՆ

(*). — Թագաւորութեան Դահլիճ Բիւզանդիոնի Ցոյն Կայսերաց։

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

ԲԵՐԼԻՆ Օգս. 1ին մեկնող թղթաբերներ Դիէնձին հասնելով պատմեր են թէ Խնամակալուհին քանի մը օր ուտեստեղէն հայթայթեր է դեսպանատուններուն։ Զօրավար Լի Բինկ Հէնկ թնդանօթներով ռմբակոծեց դեսպանատունները՝ երկու օր շարունակ։ Միսիոնար մը՝ որ փորձեց ուտեստ մատակարարել դեսպանատանց՝ սպանուեցաւ։

ԴԻԷՆՁԻՆԷ կ'հեռագրուի թէ դեսպանատանց ռմբակոծումը վերսկսաւ յուլիս 31էն օգս. 1 լուսնալու գիշերը։ Եւրոպական գերեզմանատունը պղծուեցաւ Չինացիներէն։ Օտարականք մինչև օգս. 8ի համար միայն ուտելիք ունին եղեր։

ՀՈԼԱՆՏԱԿԱՆ դեսպանն ալ հեռագրած է թէ բոլոր Հոլանտացիք ի Բեքին ողջ առողջ են։

ՀՆԴԿԱՉԻՆՈՒ Ֆրանսական կառավարչին մէկ հեռագիրը կ'ըսէ թէ անգլ. աղբիւրէ եկած տեղեկութեանց նայելով դաշնակցաց բանակը Բեքինի շատ մօտեցեր է։

—Ուաշինկթընէ ալ կ'հեռագրուի թէ զօրավար Չաֆիի հեռագրին նայելով դաշնակիցք Համամու հասեր են, Դիէնձինի և Բեքինի միջև կէս ճամբան։

ՄԱՐԷՇԱԼ ՎԱԼՏԷՐԶԷԻ ընդհանուր բանակետը պիտի հաստատուի ի Շանկայ։ Պատրաստութիւնք կ'տեսնուին այդ քաղաքին մէջ գերմանական կիսաբաժին մը տեղաւորելու համար։ Վիլհէլմ Կայսր հրահանգ տուած է Վալտէրզէի իր սպայակոյտի անդամներուն մէջ ունենալ մէկ Պավիերացի, մէկ Սաքսոնացի, մէկ Վիւրթէմպէրկցի սպայ, որպէս զի ամբողջ Գերման կայսրութիւնը մասնակցած ըլլայ Ծ. Արեւելքի մէջ գերմանական գործողութեանց։

ՔՐԻԿԿԷՐ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ.—Տէյլի Մէյլի թղթակիցը Քրիւկէր նախագահին հետ խօսակցութիւն մ'ունեցած է Օգս. 8ին։ Նախագահն յայտարարեր է թէ հակառակ շրջող զրոյցներուն, բնաւ միտքէն չէ անցուցած անձնատուր ըլլալ՝ Ո՛րքան կ'ուզեն թող ըսեն, աւելցուց նախագահը, Անգլիացիներուն նետած սուտերն են։ Բայց պէտք է գիտնալ միանգամ ընդմիշտ թէ պատերազմը վերջացած չէ և կռիւը պիտի շարունակենք դեռ երկար ժամանակ առանց հոգ ընելու թէ վախճանն ի՛նչ պիտի ըլլայ։

—Եօհաննէսպուրկի մէջ սաստիկ խեղճութիւն և աղքատութիւն կ'տիրէ։ Անգլ. կառավարութիւնը մասնաւոր աշխատանոցներ բացաւ խեղճ գործաւորներն աշխատցնելու և ապրեցնելու համար, ինչպէս կ'ընէ Հնդկաստանի մէջ։

ՀՌՈՄԻ մօտ կառախումբերուն ընդհարումէն մեռնողներուն թիւը 15 հոգի է։ Վիրաւորներուն մէջ կ'գտնուի պելժ պատուիրակութեան պետ զօրավար Պիւֆէն և երեսփոխան Տավիմինի։

ԳՈՐԾԵՐՆ Ի ՍԵՐՊԻԱ.—Ֆրէմտէնպլատ Սերպիոյ վերջին դէպքերուն վրայ խօսելով կ'յայտարարէ թէ Աւստրիոյ—Հունգարիոյ քաղաքականութիւնը ռուսական քաղաքականութեան հետ նոյն է Պալքանի մէջ՝ իրաց հին վիճակը պահելու և ներքին գործերու չմիջամտելու տեսակէտով։ Ռուսիոյ և Աւստրիոյ շահերուն մէջ հակառակութիւն չկայ։ Համաձայնութիւնը կ'շարունակէ, որով ապահովուած են բարւոք յարաբերութիւնք Աւստրիոյ և Ռուսիոյ միջև։

ՓՈԹՈՐԻԿՆ Ի ՍՕՖԻԱ.—Սօֆիայի Լրագիրք հետեւեալ տեղեկութիւնները կուտան բուռն փոթորիկի մը վրայ, որ առջի իրիկուընէ սկսելով մինչև հետեւեալ առտու ժամ 3 շարունակած է, մեծ վնասներ պատճառելով ամէն տեղ։

«Վլատայա և Բերլովէց գետերն երկու կողմէ յորդելով շրջակայ պարտէզներն ու տուներն ողողած են։ Շատ մը կամուրջներ տարուած են ջուրերէն և ծառեր արմատախիլ եղած են։ Ամէնէն աւելի վնասուած են Առիւծի կամուրջին շրջակայ տուները, որոց բնակիչք պարտաւորուեցան ուրիշ տեղեր ապաստանիլ։ Իրիկուան ժամ 11ին սկսաւ ջրանցին յորդումը, և մինչև որ ջրանկիրք հասան, փողոցներն արդէն լճի մը երեւոյթն առած էին։ Մեծ փութաջանութեամբ երեք ջրանցներ փորուեցան ջուրը Վլատայա գետին մէջ հոսեցնելու համար։ Այս դժուարին աշխատութիւն համբաւ առտուան ժամ 7ին միայն աւարտեցաւ։ Աշխատութեանց կ'հսկէին գնդապետ Բեղրով և ոստիկանապետը։ Շատ տուներու բնակիչներն ստոյգ մահուընէ ազատեցան ամենամեծ դժուարութեամբ։ Իւչ Բունար թաղն և անգլիական հիւպատոսարանի շրջականներն ալ մեծ վնասներ կրեցին։ Կառապան մը որ առտուան ժամ 2ին տուները քաղաք մտնել կ'ուզէր, խեղդուեցաւ ձիով մէկտեղ։»

ԱԾՈՒԽԻ ՍՈՎԻՆ Ի ԼՈՆՏՈՆ.—Լոնտոնցիք ածուխի սով կ'քաշեն։ Բնաւ այս աստիճան սղութիւն տեսնուած չէ մեծ մայրաքաղաքին մէջ։ Ածուխի վաճառականութիւնը շատ գէշ տեսակէն մենավաճառ է Լոնտոնի մէջ։ Քանի մը խոշոր վաճառականներուն ձեռքն է իրենց ուզածին պէս գինները բարձրացնել և զեղծումներ ընել։ Փոքր վաճառականք խոշորներուն օրինակին կ'հետեւին, եւ խեղճ սպառողները սաստիկ կ'նեղուին։ Գիներուն բարձրացումն ոեւէ արդարացուցիչ պատճառ չունի։ Այն ատեն միայն կրնայ արդարանալ ածուխի գնոյն բարձրացումը, երբ վաճառականն ստիպուի աւելի գին վճարել ածխահանքերու տէրերուն, կամ հանքագործներուն կանխավճար ըլլայ և կամ փոխադրութեան ծախքերը շատնան։ Այս պատճառներէն և ոչ մին կայ հիմա։ Պարզապէս վաճառականը կ'ըսէ ինքն իրեն.—«Ես մարդասիրական զգացում չունիմ և քանի որ Լոնտոնցի ընտանիքներն ստիպուած են իմ միջոցաւս գնել, ես ստակն առնելս կ'նայիմ։» Եւ այս բարեպաշտ վաճառականներն այսպէս ածուխին թոնոն 32 շիլինի ծախել սկսած են, սովորական գնին կրկինը, և ամրան մէջ ամէնէն ցած գինն է եղեր ասիկա, և ի մօտոյ նորէն պիտի բարձրանայ։ Շատ ցաւալի է որ ածուխի առեւտուրը մենավաճառ եղած է և մրցում չըլլալուն երեսէն ժողովուրդը կ'նեղուի։ Լոնտոնէ կ'գրեն թէ ձմեռ արդեօք ի՛նչ սոսկալի նեղութիւններ պիտի քաշեն աղքատիկ ընտանիքները։

ՈՒՄՊԷՐԴՕ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿԱԹՆԵՂԲԱՅՐԸ.—Այս երջանիկ մահկանացուն է Մ. Լէօն Կաէնֆիլօ, քաղաքապետ Մօպէռ—Ֆօնդէնի։ Մ. Կաէնֆիլօ Դուրինոյի Ֆրանսական դեսպանատան կառապանին զաւակն է Շառլ Ալպէռի, այսինքն Ումպէրդօ թագաւորին մեծ հօր ժամանակ։ Կաէնֆիլոյի հօր մայրը ստնտու եղաւ Իտալիոյ ապագայ թագաւորին. այդ միջոցին փոքրիկն Լէօն Կաէնֆիլօ քանի մը ամսուան էր դեռ։ Իտալիոյ արքայական ընտանիքը միշտ յիշած է Ումպէրդօ թագաւորին ստնտուն, որ ամէն Մարտ ամսու, թագաւորին ծննդեան տարեդարձին օրը, պատուական նուէր մը կ'ընդունէր անպատճառ։ Թագաւորին դագաղը ծածկող ա՛յնքան սգանշելի պսակներուն մէջ կ'դիտուէր պարզիկ պսակ մը, Ումպէրդօ Ա.ի կաթնեղբօր Մօպէռ—Ֆօնդէնի ֆրանսացի քաղաքապետին պսակն էր այն։

ՇԱՀԻՆ ԺԱՄԱՆՑԸՆ Ի ԲԱՐԻԶ.— Օգս. 11ին ճաշէն ետք Վեհապետն և իր հետեւորդք գացին Արուեստահանդէսին Նաւային հանդէսին։ Ահագին բազմութիւն խռնուած էր արդէն և հանդէսին կատարեալ յաջողութիւնը մեծ տպաւորութիւն ըրաւ Շահին վրայ, որ սքանչացած էր իր տեսած նկարուն համար։ Արէսի Դաշտը խռնուած հանդիսականներուն մէջէն ոմանք Քեօչինէրը մտիկ կ'ըրնէին, ուրիշներ անշարժ և համբերատար կ'սպասէին որ երեւին յանկարծ լուսեղէն ցնցուղները, և այս միջոցիս Շադօ Տ'օյի դիմաց բեմ մը պատրաստուած էր։ Շահն ու իր պալատականներն ձիոյն մեծամեծներն մէջ, որ փայլուն կերպով լուսազարդուած էր և անցան տօներու սրահէն, յետոյ մեծ սանդուխէն իջան պաշտօնական բեմը ելնելու համար։ Անցքին վրայ քաղաքապետական պահանորդներ կարգաւ կեցած էին, երկու գումարտակ զօրք զինուորական պատիւներ կուտային, մինչդեռ զինուորական երաժշտախումբը պարսկական ազգ. երգը կ'երգէր։ Մինչ ամբողջ բազմութիւնը կ'ծափահարէր վեհապետն ու իր հետեւորդները, հանդէսն սկսաւ։ Շահն և իր նախարարք, Մ. Բիքառ և իր աշխատակիցք թիկնաթոռներու վրայ նստեցան։ Մուզաֆֆէրէտտին շատ կ'հետաքրքրուի գիտական խնդիրներէ, ուստի զանազան բացատրութիւններ կ'խնդրէր ելեկտրական խնդիրներու վրայ և տեսարանէն շատ գոհ կ'երեւէր։ Շահն եւ իր հետեւորդք ժամ 10ին լանտոյով անցան զինուորական վարժարանին առջևէն և Հանրապետական Համաժողովին պալատէն։ Ամենուստ ծափահարուած։ Ալմայի հրապարակին վրայ դիզուած էին քսան հազար հոգի որք կ'գոչէին «Կեցցէ Շահը»։ Վեհապետը կ'առաջնորդուի Սէնի վրայ նայող պալատին առջին յարկին պատշգամը, և քանի մը առանձնաշնորհեալ անձինք միայն կրցան այս պատշգամին վրայ ներկայ ըլլալ Նաւային հանդէսին որ կ'սկսի քիչ ատենէն։ Հրթիռներու և ճառագայթներու հոսանք մը, ինչպէս նաև պալատին առջև խռնուած անհամար հանդիսականք կ'ողջունեն Շահին երեւումը։ Ցետոյ հարիւր նաւեր դրօշազարդ, ծաղկազարդ, գինանշաններով դրուագուած, բազմագունեան օդապարիկներու տակէն կ'անցնին ու կ'անցնին։ Մէն մի նաւու մէջ գտնուած երաժշտախումբ զանազան երկիրներու ազգային երգերը կ'նուագէ, մինչդեռ երկու եզերքէն արձակուած հրթիռներ ոսկեգոյն անձրև կ'թափեն գետին վրայ։

Գրեթէ ժամ մը Մուզաֆֆէրէտտին կրթնած մնաց պատշգամին, ծափահարելով ամէնէն յաջող հրախաղութիւնները, և ձեռքը բռնած թաշկինակով մը բարեւելով նաւազներն ու նաւարդները, որ զինքը կ'ծափահարէին։ Պարսիկ վեհապետն անհամեստ հարցումներ կ'ընէր իրեն մօտ գտնուած Արուեստահանդէսին ընդհ. Քօմիսէր Մ. Բիքառի, կամ իր թարգմանին միջոցաւ անոր կ'ուղղէր այդ հարցումները։ Վերջապէս պալատին առջևէն անցաւ նաւակ մը, որուն ցռուկին վրայ կ'գտնուէր կին մը թեթեւ շղարշներով կիսազգեստ։ Պարսիկ վեհապետն հարցուց բա՛ռ առ բա՛ռ,—«Կինն ո՞ղջ է։» Մ. Բիքառ պատասխանեց թէ կատարելապէս ողջ է։ Ցետոյ վեհապետը, փոքրիկ զրահաւոր մը ձևացնող մակոյկի մը անցած պահուն, նոր բաներ հարցուց,—«Գետը խորո՞ւնկ է։ Բարիզէ մինչև ծով հեռաւորութիւնն ո՞րքան է։»

Վերջին հանդէսն էր այս որ ի պատիւ Շահին պատրաստուած էր։ Երկրորդ օրը Ն. Վեհափառութիւն մեկնեցաւ Բարիզէ։

Կ'ըսուի թէ Շահը Բարիզի մէջ գտնուած միջոցին գներ է 1 միլիոն 600,000 Ֆր. արժողութեամբ առարկաներ՝ իր անձնական գործածութեան համար։ Այս գումարէն 50,000 Ֆր. լուսանկարչական գործիքներու համար վճարած է։ Ցատուկ կարավան մը դէպի Պարսկաստան պիտի տանի այս առարկաները։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Թաղապետութեան Ը. շրջանակի Տնօրէն անուանուեցաւ Խաքէչէի Գայմագամ Մէհմէտ փաշա, Բ. Դրան իրաւագիտաց Սենեկին օգնական անուանուեցաւ Նաբոլիի օսմ. ընդհանուր հիւպատոս Մէհմէտ Էսատ պէյ, որուն յաջորդեց նոյն Սենեկին օգնական Բաղըփ պէյ։

Սանիէի աստիճան տրուեցաւ Պոլսոյ Ներքին պաշտօնեայ մաքսատան թղթակցութեան դիւանին անդամ Մէհմէտ Սաէիտ և Բ. Դրան հիւպատոսական գործոց դիւանին անդամ Ալի Հիքմէթ պէյի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ մը կ'ծանուցանէ թէ Շէրիի դատարաններուն դիմող աղքատ որբերուն և կիներուն նկատմամբ բացառութիւն մ'ըլլալու համար, Դատական Նախարարութեան խնդրանօք և Պետական Խորհրդոյ հաւանութեամբ, որոշուած է գաղթականական դրոշմատուրքէ ազատ կացուցանել Շէրիի դատարաններէն տրուած այն վճռագրերն ու Հէօճճէթներն որք 1000 ղրուշէն վար գումար մը կ'պարունակեն, ինչպէս նաև քաղաքային դատարաններէ տրուած նմանօրինակ վճռագրերն, որք մեծ մասամբ աղքատներու կ'վերաբերին։

ԴԱԴԱՐՈՒՄ.—Պուլկարերէն «Բրոկրէս» լրագիրը, իրեն եղած ազդարարութեանց ու պատուէրներուն անսաստած ըլլալով, Օգստ. 3էն սկսեալ դադարման դատապարտուած է։

ՍՈՒՏ ԼՈՒՐԵՐ. — Հեռագրական Գործակալութեանց թղթակիցներէն ոմանք, անխոստովանելի զգացման մ'անսալով, Եւրոպիոյ մէջ տպաւորութիւն յառաջ բերող լուրեր հրապարակ նետած են, իբր թէ Անատոլուի մէկ քանի գաւառներուն մէջ բարեկարգութիւնն ու հանրային անդորրութիւնը խանգարուած են եղեր, կարող ենք բացորոշ և բացարձակ հերքում մը տալու այս լուրերուն։ Հանրային խիղճն անտարակոյս խստիւ պիտի դատէ գործերն այս թղթակիցներուն որք այնքան մոռացկոտ են հանդէպ երկրին որ հիւրընկալած է զիրենք։» [Մաֆթէօ—]

ՖԷՐՏԻՆԱՆՏ իշխանին Պուլկարիոյ իշխան անուանման տարեդարձին առթիւ, առջի օր Պուլկար Եկզարքարանի մատրան մէջ գոհաբանական աղօթքներ կարդացուեցան։ Ներկայ գտնուեցան Պուլկար գործակատարութեան պաշտօնատարք, առեւտրական պայմանագրի յանձնաժողովին պուլկար պատուիրակներն և պուլկար երեւելիք։

ԿԱՅՍ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ. ինչպէս յայտնի է, առ այժմ կայս. Միլքիէ վարժարանին շէնքին մէջ պիտի հաստատուի։ Միլքիէ վարժարանին բարձրագոյն կարգերը դարձեալ նոյն շէնքին մէջ պիտի մնան, իսկ Իտատիէի կարգերը, կայս. հրամանաւ, յարմար շէնքի մը մէջ պիտի փոխադրուին։

—Կրթական նախարար Զիւհտի փաշայի նախագահութեան տակ գումարուած յանձնաժողովը այս պահուս Համալսարանին ուսուցչապետներուն ընտրութեամբ կ'զբաղի։ Ընտրելիներուն մէջ կ'յիշուին ուսուցչապետ Վամպէրի, կայս. Միլքիէ վարժարանին տնօրէն Րէճայի էֆ., Եւլմական նախարարութեան խորհրդական Ռաֆօֆ պէյ, Հանրօգուտ Շինութեանց նախորդ նախարար Թէվֆիք փաշա, Հասան Ֆէհմի փաշա, Իւլէմա Մանասթըրլը Իսմայիլ Հագգը և Եուսուֆ էֆ.ք, կայս. Դիտարանին Տնօրէն Սալիհ Զէքի էֆ., Պետական Խորհրդոյ անդամ Եքրէմ պէյ, և բժշկական վարժարանի ուսուցիչ Հաճի Ալի փաշա։

ԹՈՒՐՔԵՒՀԵԼԼԷՆ հիւպատոսական պայմանագրի խառն յանձնաժողովին օսմ. պատուիրակները, հելլէն պատուիրակներուն յիշատակագրին ի պատասխան, իրենց պատրաստած յիշատակագիրը մատուցին արտաքին գործոց նախարարութեան։

ՓԱԽՉՈՂ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐԸ.—Ինչպէս ասկէ առաջ պաշտօնական զեկուցմանց կարգին մէջ ծանուցուած էր, Նախարարաց Խորհրդոյ որոշման համաձայն, որ կայս. Իրատէով վաւերացուած էր, առանց օրինական արտօնութեան օտար երկիր փախչող և հոն կայս. Կառավարութեան դէմ խռովայոյզ հրատարակութիւններ ընելու յանդգնող պաշտօնատարք երբ զղջալով Թուրքիա վերադառնալու փափաք յայտնեն, կայս. ներման պիտի արժանանան, իսկ անոնք որ անսաստելով յամառին, ըստ օրինի պիտի պատժուին։ Թուրք թերթերը կ'ծանուցանեն թէ, կայս. հրամանաւ, Վճռաբեկ Ատենի ընդհ. դատախազ Ճէլալ պէյի նախագահութեան տակ յատուկ յանձնաժողով մը կազմուած է անդամակցութեամբ Վերաքննիչ Ատենի ընդհ. դատախազ Ճէմալ պէյի և պատժական գործոց Տնօրէն Մէհմէտ պէյի։ Այս յանձնաժողովոյ պաշտօնն է օտար երկիր ապաստանող Թուրք պաշտօնատարներն հրաւիրել որ Թուրքիա վերադառնան, և այս մասին հարկ եղած բանակցութիւնները կատարելով, արդիւնքը Դատական Նախարարութեան միջոցաւ տեղեկագրել ձեռնհաս պաշտօնատան։ Բ. Դուռն ալ կայս. հաւանութեան պիտի մատուցանէ։ Իսկ դատական միջոցներ պիտի տնօրինէ անոնց նկատմամբ որք իրենց պակասութեան մէջ յամառելով, կայս. գթութեան չեն ապաւինիր։ Ցանձնաժողովն անցեալ շաբթուընէ ի վեր սկսած է իր նիստերը։

ԻՏԱՏԻԷ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ.—Կայս. Իրատէ մը կ'հրամայէ արուեստագիտական ու առեւտրական դասեր մտցնել բոլոր Իտատիէ վարժարաններուն ուսմանց ծրագրին մէջ։ Կրթական պաշտօնատան մէջ յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ, կայս. սոյն Իրատէին համաձայն բարեփոխելու ուսմանց ծրագիրը։

ՀԻՃԱԶԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ.—Հալէպի կուսակալութիւնը ծանուցած է թէ նահանգին մէջ 25000 ոսկի պիտի հանգանակուի ի նպաստ Հիճազի երկաթուղւոյ շինութեան, իսկ Պաղտատի նահանգը 12000 ոսկի պիտի հանգանակէ։

ՊՈՒԼԿԱՐԱՑ Եկզարքարանն եւ շքեղ ուղերձ մը կ'պատրաստէ, զոր կայս. Ցոբելեանին առթիւ պիտի մատուցանէ յառա կայս. Գահոյից։

ԱԽՈՌՆԵՐԸ.— Առողջապահական քննիչներուն տեղեկագրին վրայ, Քաղաքապետութեան ժողովն արգիլած էր թաղերու մէջ ախոռներու շինութիւնը։ Անոնք որ ախոռ շինել կ'ուզէին, նախ պարտէին արտօնութիւն ստանալ, և թաղապետութեանց կողմէ տրուած յատակագծին համակերպիլ։ Սակայն ժամանակէ մ'ի վեր այս կանոնը անգործադրելի դարձած է, և ամէն ոք իր ուզածին պէս ախոռներ շինել կուտայ։ Թուրք թերթերը Քաղաքապետութեան ուշադրութիւնը կ'հրաւիրեն այս անպատեհութեան վրայ, և կ'պահանջեն որ ախոռները քաղաքէն դուրս տեղ մը շինուին, յօգուտ հանրային առողջութեան։

ԱՒԱԶԱԿԱԽՈՒՄԲ.—Էրզրումէ քաշուած հեռագիր մը կ'ծանուցանէ թէ Ազա—Մահքէմէի կողմերը խուզարկութիւն կատարող օսմ. զօրաց ջոկատ մը 5 հոգիէ բաղկացեալ աւազակախմբի մը հանդիպեր է, որ ապառաժուտ և սեպացեալ բարձունքի մը վրայ դիրք բռնած էր։ Օսմ. զօրքերը սակայն, հակառակ այս սեպացեալ դիրքին, յաջողեր են բոլոր աւազակներն ալ ողջ բռնել, և Էրզրում ղրկել։ Տեղի ունեցած ընդհարման միջոցին, օսմ. զօրքերը կորուստ չեն ունեցած։

ԺԱՆՏԱԽՏ.—Եգիպտոս Իզմիրի արտածութեանց դէմ հաստատած քարանդինան վերցուց։

ՕՐԼԷԱՆԻ դուքսը պղնձեայ արձանիկ մը նուէր ղրկած է զօրավար Ահմէտ Ալի փաշայի, որ հիւրամեծար կերպով ընդունած էր իրեն, երբ Կ. Պոլիս այցելեց։

ԻԶՄԻՐԻ մէջ իտալական առեւտրական սենեակ մը պիտի հաստատուի։

ԽԱՇԽԱՇԻՆ գինը 50 սանդիմ եւս ինկաւ Եւրոպիոյ մէջ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԱՐԿԱԾԸ.— Հեռագիրը ծանոյց թէ Օսմ. Պատուիրակութեան անդամները պարունակող սրընթաց կառախումբն ուրիշ կառախումբէ մը ընդհարում կրած էր, բայց օսմ. պատուիրակներն անվնաս ազատած էին։ Վերջին թղթաբերով եկած եւրոպական թերթեր կ'ծանուցանեն թէ ընդհարումը տեղի ունեցած է անցեալ կիրակի գիշեր, Հաւռէ 12 քիլոմէթր հեռի։ Վերջին հանդէսներուն առթիւ, Հաւռէ մեկնող ճամբորդներուն թիւն աւելցած ըլլալով, երկաթուղեաց ընկերութիւնն ըստ այնմ կառախումբերն աւելցուցած էր։ Շր. օր Հաւռէ կառախումբ մը մեկնած էր Ֆիրբենցա երթալու համար, երբ 12րդ քիլոմէթրին վրայ վայրաշարժն արկածի մը հանդիպելով, կանգ առնելու պարտաւորուեցաւ։ Ընդհարման մը առաջքն առնելու համար, մարդ ղրկուեցաւ իմաց տալու համար ետեւէն եկող կառախումբին, որ կանգ առնէ։ Սակայն կառախումբին մեքենավարը կա՛մ տրուած նշանը չտեսնելով, և կա՛մ չկրնալով դիւրաւ կեցնել ճեպընթաց կառախումբը, ընդհարումը տեղի ունեցաւ անխուսափելիութեամբ։ Վակոններէն ոմանք խորտակուեցան և ոմանք տապալեցան։ Ուղեւորներէն 12 հոգի մեռան և 40 հոգի վիրաւորուեցան, որոնց 5ը ծանրապէս։ Ռուսիոյ Բէգլէր մեծ—դուքսը, որ կառախումբին մէջ կ'գտնուէր, ուզեց անմիջապէս Հաւռ հեռագրել պատահած արկածը, բայց վակոններուն տապալման հետեւանօք հեռագրական ձողերն ալ տապալած էին և թելը խզուած էր։ Այս պատճառաւ աղէտքին լուրը գիշերը շատ ուշ հասաւ Հաւռ։ Վիքդոր Էմմանուէլ Գ., որ պահած էր, իսկոյն լուր տուաւ թագուհւոյն, և ի միասին կայարան գացին արկածին վայրը փութալու համար, բայց առանց սպասելու օգնական կառախումբին մեկնելուն, կառքով դիմեցին արկածին վայրն ուր հասան առաւօտուն։ Թագաւորն ու Բէգլէր մեծ—դուքս օգնութեան գործը կազմակերպեցին։ Թագուհին շատ սրտայոյզ տեսակցութիւն մ'ունեցաւ Բէգլէր մեծ—դքսուհիին հետ, որ իր քոյրն է։ Թագուհին մխիթարեց վիրաւորեալ կիները։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.—Հելլէն գործակատար Մ. Կրիբարիս և Թուրքեւպուլկար առեւտրական պայմանագրի պուլկար պատուիրակներն երէկ տեսակցեցան Մեծ—Եպարքոսին հետ։

—Ֆրանս. դեսպան Մ. Քոնսդան երէկ Հանր. Պարտուց Վարչութեան պաշտօնարանն երթալով, տեսակցեցաւ Քօմանտատ Պէժէի հետ։

ՔՆՆՈՒԹԻՒՆ.— Խնուս գաւառակին դատական պաշտօնէից դէմ գանգատներ եղած էին։ Դատական քննիչը, քննութիւն կատարելով, արդիւնքը տեղեկագրած է դատական նախարարութեան։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ դեսպանատունը խնդրեց Բ. Դռնէն որ Գավալայի մաքսատան մթերանոցներն ընդարձակուին, որպէս զի օտար երկիրներէ բերուած ապրանքներն օրերով դուրսը չմնան։

ԹՈՒՐՔԵՒՍԵՐՊ առեւտրական դաշնագրի յանձնաժողովը երէկ վերստին գումարուեցաւ։ Սերպ դեսպան Մ. Միյաթովիչ մասնակցեցաւ խորհրդակցութեանց։

ՈՃԻՐ. — Երէկ գիշեր, Ֆօթիճի թաղին մէջ, անծանօթ անձ մը 25 տարեկան Սօֆիա մը դանակով զարկաւ սպաննեց։ Մարդասպանը կ'փնտռուի։

ԱՐԵՒԵԼԵԱՆ Երկաթուղեաց Պանքային Ցուլ. 30ին վերջացող տարեշրջանին գործառնութեանց տեղեկագիրը ցոյց կուտայ թէ Պանքային գործունէութիւնը սահմանափակուած է Արեւելեան երկաթուղիները շահագործող ընկերութեան և Սելանիկ—Մանասթըրի ընկերութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ։ Երկաթուղւոյ ձեռնարկութեանց մէջ իր ունեցած մասնակցութեան հասոյթը հասած է 2,401,805 Ֆր.ի, այն է նախորդ տարեշրջանին վրայ 40,041 Ֆր. աւելի։ Արեւելեան երկաթուղեաց ընկերութիւնն այս տարի 4% շահաբաժին բաշխած է։ Պուլկարիոյ հետ կնքուած պայմանագրին համաձայն, իշխանապետութիւնն սկսած է իր յանձնառութիւնները կատարել։ Սելանիկ—Մանասթըրի երկաթուղւոյ ընկերութիւնը 5% շահաբաժին տուած է առանձնաշնորհեալ բաժնեթուղթերու վրայ միայն։

ՌՈՒՍԱԿԱՆ Չիհաչէֆ շոգենաւը, երէկ Օտեսայէ գալով, Միջերկրական ուղեւորեցաւ, բազմաթիւ զօրք տանելով Չինաստան։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐԸ.— Սերպիոյ մէջ տեղացող հեղեղանման անձրեւներուն հետեւանօք, Եւրոպական կառախումբն առջի օր չէ կրցած Զարիպրոտ հասնիլ։ Հետեւապէս, երէկ առաւօտ Սիրքէճի հասնող պայմանագրական կառախումբը թղթատարական պայուսակները չբերաւ, որոնք երեկոյին միայն հասան։

ՏԷՖԹԷՐՀԱՆԷԻ վարչութեան առաջարկութեամբ, Պետական հողերու վաճառման առթիւ առնուած փոխանցման տուրքը հազարին 20էն 30ի բարձրացաւ։

ԼՈՒՐԵՐ ԻԶՄԻՐԷ.—Մեր թղթակիցը կ'գրէ Ցուլիս 29 թուով.—«Բէյօղլու 1155 թուոյն ներքին լուրերուն մէջ Բերացի մը կ'հարցնէ թէ ինչո՞ւ ժանտախտէ բռնուած 19 անձերուն մէջ նախամօր Եւայի ներկայացուցիչներէն և ո՛չ մին կ'տեսնուի և աս հետաքրքրական երեւոյթին պատճառը կ'հարցնէ։ Երանելի՜ մարդ,

ո՛վ որ է, քանի որ փէշ, զ..վէն չունի և տաանկ բաներով կ'վրաղէ, եթէ Բիւզանդիոնի օրէն օրին հրատարակած լուրերը ուշի ուշով կարդար, պիտի տեսնէր թէ բանտարկեալներուն ցանկին մէջ կայ 13—14 տարու Նիազէ Պէկա անուն աղջիկ մը և վերջերս ալ խափշիկուհի մը։ Կ'մնայ սա խնդիրը թէ ինչո՞ւ բանտած 22 [և ո՛չ թէ 19] անձերուն մէջ գեղեցիկ սեռէն երկու հոգի բանտած են միայն և ո՛չ աւելի։ Ասոր ալ պատճառը — քանի որ Իզմիրցիք այս հիւանդութիւնն իբր «խըլյարճըք» նկատած են և ո՛չ թէ իբր ժանտախտ —, կ'երեւի թէ «խըլյարճըք»ը ազդեցութիւն չունի եղեր միւս սեռին վրայ։

«— Երկու օրէ ի վեր քաղաքին մէջ լուր կ'պտըտի թէ Ամերիկա Թուզ և չամիչ չպիտի ընդունի Իզմիրէ։ Ոմանք կ'հաւատան և ոմանք ալ կ'ըսեն թէ այս լուրը քանի մը վաճառականներ չաճագիտականն պատրուակ հանած են։»

ԹՐԵՍԻ ԼԻՈՆԷԻ Արժէթղթոց ճիւղին պետ Ցակոբ էֆ. Պապեան արձակուրդ առնելով, վաղուան ռումանական շոգենաւով կ'ուղեւորի դէպ ի Գերմանիա, ուստից պիտի անցնի Զուիցերիա և Բարիզ։

ՀՐԴԵՀԻ սկզբնաւորութիւն մը պատահեցաւ այսօր կէսօրին Բիւյիւք — Բազարի [Ոսկեգարան] մէջ, բայց շուտով առաջքն առնուեցաւ։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Արդէն գրած էինք թէ Տ. Եղիա Վրդ. և մէկ քանի Սեւերեկցի ազգայիններ դատարանի վճռով անպարտ արձակուեր էին Տիարպէքիրի բանտէն։ Տ. Եղիա Վրդ. իսկոյն Սեւերեկ իր ծննդավայրը դառնալով գրութիւն մը յղեր է Պատրիարքարան, որուն մէջ կ'յայտնէ թէ Սեւերեկի ազգայինք մեծ ուրախութեամբ ընդունեցին զինքն և այս առթիւ բարեմաղթութիւններ ըրին Վեհ. Սուլթանին արեւշատութեան համար։

— Երզնկայի առաջնորդ Տ. Դանիէլ Վ. Ցակոբեան անկէ առաջ արտօնութիւն խնդրած էր Պատրիարքարանէ Պոլիս գալու իր տկարութիւնը դարմանելու համար։ Սակայն կրօնական ժողովը հարկ դատած էր գրել իրեն թէ վիճակէն չհեռանայ և թժիշկներուն մէջ պտտելով դարմանէ իր տկարութիւնը։ Այս անգամ Տ. Դանիէլ Վ. վերստին կ'խնդրէ որ քանի մը ամսուան համար արձակուրդ շնորհուի իրեն, դիտել տալով որ իր բացակայութիւն երբեք պիտի չվնասէ վիճակին ազգային գործերուն։

— Թուլուճուզի որբախնամ Ցանձնաժողովը առաջարկեր է Պատրիարքարանի, որ Մշոյ աղջկանց վարժարանի մէջ իր հաշուոյն չորս որբուհիներ որդեգրուին, որոց համար ամսական երկու ոսկի վճարել յանձն առած է։ Ցանձնաժողովս յոյս կ'յայտնէ որ մէկ քանի ամիսէն որբուհիներու թիւը վեցի բարձրացնել պիտի յաջողի։

— Զէյթունէն կ'գրեն Պատրիարքարան թէ տեղւոյն Ազգ. վարժարաններուն տարեկան հարցաքննութիւնները տեղի ունեցեր են ի ներկայութեան Գայմագամ պէյի, կառավարական պաշտօնէից և ազգայնոց։ Գայմագամ պէյը շատ գոհ մնացեր է աշակերտաց տուած յաջող քննութենէն և խոստացեր է յառաջիկայ տարւոյ համար վարժարանին պէտք եղած Թուրքերէն դասագրքերն իր քսակէն հայթայթել։ Նոյն օրը տեղի ունեցեր է նաև աղջկանց վարժարանի ձեռագործներուն համար կազմակերպուած վիճակահանութիւնը, որմէ գոյացեր է 21 արծաթ մէճիտ։

— Խառն ժողովոյ անդամներէն Ասատեան Մկրտիչ էֆ., որ Պատրիարքարանի փոխանորդ է Աչըքեան Սրբազանի քով կողմէ Պատրիարքարանի դէմ բացուած դատին, նոյն դատին ստացած վճռին պարզող տեղեկագիր մը պիտի մատուցանէ այսօրուան Խառն ժողովոյ։

— Արմաշու Փոխ—Վանահայր Դուրեան Տ. Եղիշէ եպիսկոպոս մայրաքաղաքս եկած է, իր մորթի հիւանդութիւնը դարմանելու համար։

— Շրջանաւարտից Քննիչ Ցանձնաժողովին մէջ կարգ մը անպատեհութիւններ տեղի ունեցած ըլլալով, Ուսումն. Խորհուրդն իր այսօրուան նստին մէջ ատոնց քննութիւններով պիտի զբաղի։

— Ատաբազարէ կ'գրեն մեզ թէ Տիրայր Վրդ. պտոյտ մը կատարեր է իր դաստիարակած որբերով միասին։ Ատաբազարի մէջ մեծ ընդունելութիւն գտեր է։ 30 Ցլս. Կիր. պատարագեր է Ս. Հրեշտակապետ եկեղեցին, խուռն բազմութիւն մը ներկայ գտնուեր է իր քարոզին, որուն բնաբանն էր «Զի ոչ ետ մեզ Աստուած ոգի երկիւղի, այլ զօրութեան և սիրոյ և զգաստութեան». (Բ. Տիմոթ.)։ Ժամ մը տեւեր է, ժողովուրդը հաւանութեամբ ունկնդրեր է և այս առթիւ ալ զգացեր է քարոզչի մը անհրաժեշտ պէտքը։ Ժողովուրդին խանդավառ համակրանքին ու գգուանքներուն մէջ որբերը մեկներ են Նշ. Արմաշ 10 օրը բաւ համարելով այս անգամուան համար. օթեւաննին եղած է Ցովհ. էֆ. Ճէզայիրլեանի տունը, որուն որդին, Միհրան էֆ. Ճէզայիրլեան. Դարե-

վանքի գիտութեանց հմուտ ուսուցիչն է. տղաքն ամէն կերպով հանգիստ վայելած են հոս քաղցրիկ մօր մը հոգածութեան տակ. մանաւանդ ճաշեր տրուած են սա՛ գիտակցութեամբ թէ գժբախտները խնամել ամէնուն պարտքն է. կ'գովենք Ատաբազարցւոց հիւրասիրութիւնը։

— Բերայի Թաղ. Խորհուրդը կ'ծանուցանէ թէ Օգոստոս 21ին Թաղին Ազգ. վարժարաններու վերաբացումը տեղի պիտի ունենայ և դասախօսութիւնք պիտի սկսին Սեպտեմբեր 1ին։ Ցաճախել փափաքող աշակերտք եւ աշակերտուհիք կ'հրաւիրուին՝ Օգոստոս 1է սկսեալ դիմել ամէն առաւօտ ժամ 2էն 4 ի Թաղ. Խորհրդարան Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ և մինչեւ Օգոստոս վերջ իրենց թոշակի հաշիւը կարգադրելով ստանալ մուտքի արտօնագիրը։ Այս տարի Խասեան վարժարանի աղջկանց բարձրագոյն դասընթացքի երկրորդ տարին պիտի բացուի, որով վարժարանը պիտի ունենայ լրացուցիչ երկու կարգեր, թէ՛ այս մասին և թէ աշակերտաց ու աշակերտուհեաց հիմնական կրթութիւն մը ընծայելու համար պէտք եղած միջոցները Թաղ. Խորհրդոյ կողմէ ձեռք առնուած ըլլալով, աշակերտելու փափաքողները կ'հրաւիրուին փութով արձանագրուիլ, որպէս զի կարելի ըլլայ դասարաններն անյապաղ կազմակերպել։

ՀԱՐՍԱՆԻՔ.— Փաստաբան Միսաք էֆ. Նարլեանի պսակադրութիւնն ընդ Ազն. Օր. Հերանուշ Միսճէլիի՝ տեղի ունեցաւ բոլորովին մտերմական շրջանակի մէջ, այս Բշ. ի Բերա իր բնակարանը կնքահայրութեամբ իր եղբօր Մագսուտ էֆ. Նարլեանի։ Պսակի Խորհուրդին կ'նախագահէր Տ. Հմայեակ Սրբազան։ Միսճէլի ընտանիքը բնիկ հունգարացի հին լուսաւորչական ընտանիք մ'է, և Նարլեան էֆ. շնորհաւորելի է մանաւանդ անոր համար որ զարգացեալ և դաստիարակեալ Օրիորդ մ'ընտրած է իրեն ամուսին։

"ԲԻՒԶԱՆԴԻՈՆ,,Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ (Ռուսչուք).— Վճարեալ 271։ Հանեցէք առաջիկայ առթիւ 144 ղչ. յանձնել ի հաշիւ Տ. Ծ.ի և ընկալագիրը մեզ ղրկել։

ՀԵՌԱԳԻՐԵՐ

Մ. ԼՈՒՊԷԻ ՃԱՌՆ Ի ՄԱՐՍԻԼԻԱ

Հանրապետութեան նախագահը, որ Մարսիլիա գացած էր (Օգս. 12, կիրակի օր) Չինաստան մեկնող զինուորներուն դրօշներն յանձնելու համար, հետեւեալ ճառը խօսեցաւ, որուն վրայ մեծ գովեստով կ'խօսի եւրոպական մամուլը։

Նախագահը խօսքը ծովային նախարարին ուղղելով, ըսաւ.—«Գիտեմ թէ ծովային և պատերազմական նախարարութիւններն ի՛նչ ջանքեր ըրին արշաւախումբին կազմակերպութեան համար։ Մանաւանդ ամէն նախաձեռնութիւն ըրին զօրաց առողջութեան տեսակէտով։ Զօրավար Վուարոնի պէս պետ մը ունենալով՝ զինուորք լաւ ձեռքերու մէջ են։ Ասկէց քսան տարի առաջ զօրավար Վուարոն Ս. Լուիէ Նիկէր (Աֆրիկէ) առաջնորդեց առաջին ֆրանսական գունդը, որ առաջին անգամ ըլլալով անցաւ այդ հիւրամերժ գաւառէն։ Եւ երբ հարցուցի իրեն թէ շատ մարդ կորսնցուցա՞ծ էր, պատասխանեց թէ իր գունդին մէջ մեռնողաց թիւն աւելի եղած չէ ինչ որ սովորական ժամանակի մէջ կ'ըլլայ ի Ֆրանսա։ Ասոր պատճառն այն է որ մեր սպայք պետ չեն միայն, այլ հայր են իրենց զինուորներուն և անոնց վրայ կ'հսկեն ա՛յնքան հոգածութեամբ ինչպէս ընտանիքի մը գործավարութ պետը կ'հսկէ իր զաւակներուն վրայ։ Շնորհակալութիւն յայտնեցիք ինծ հոս գալուս համար. հոս եկայ իմ պաշտօնիս ամենագեղեցիկ պարտաւորութիւններէն մին կատարելու և պատուելու մեր դրօշը։ Հոս եկայ, ինչպէս տասն և հինգ օր առաջ Շէրպուռ գացի, ցրուելու համար սա՛ եղեռնական երկդիմութիւնը զոր կուսակցական ոգին կ'ջանայ ծնուցանել, թէ մեծ փոս մը բացուած է ֆրանսական բանակին և ֆրանսական ազգին միջեւ։ Հրէշային փորձ, որ պիտի չյաջողի, որ արդէն յաջողած չէ, վասն զի Բանակը միթէ ազգին ծոցէն դուրս ելած չէ՞։ Եւ երբ աւարտի զինուորական ծառայութեան շրջանն որուն ենթարկուած են ամէն քաղաքացիք, բանակը դարձեալ չի՞ մտներ հասարակաց վառարանին մէջ։ Ազգ և բանակ մէկ են, և միեւնոյն անձնուիրութեամբ տոգորուած են Ֆրանսայի և Հանրապետութեան համար։ Ահա այս զգացումներով ոգեւորեալ է ի Չինաստան գացող ֆրանսական արշաւախումբը։ Անոր յանձնած դրօշները փառաւորապէս պիտի պահուին։ Մեր զինուորք գիտեն թէ ի՛նչ է իրենց պարտքը։ Պիտի չվերադառնան առանց օրինակելի պատիժ մը տալու անոնց՝ որք քաղաքակիրթ Տէրութեանց ամէնէն էական օրէնքները բռնաբարեցին և ամէնէն բացորոշ դաշնադրութիւնները պատառեցին։

«Այդ քաջ զինուորներուն կենացը կ'պարպեմ բաժակս։

«Ցամաքային բանակին և ծովային բանակին արշաւախմբին սպաներուն կենացը կ'քամեմ բաժակս։»

Նախագահը Մարսիլիոյ քաղաքապետին ճառին պատասխանելով ըսաւ.—

«Մարսիլիա եկայ ողջունելու Ֆրանսայի զաւակներն որք Ծ. Արեւելք կ'երթան։ Ֆրանսա կամ Հանրապետութեան կառավարութիւնը չէ որ հեռաւոր արշաւանք մը երազեց կամ մտածեց։ Երբ ժողովուրդ մը՝ որուն հետ յարաբերութիւններ կ'մշակենք՝ յանկարծ կ'պատառէ դաշնադրութիւնները, կ'բռնաբարէ միջազգային իրաւանց նուիրականութիւնը, երբ կ'թողու որ իր մայրաքաղաքին մէջ պաշարուին քաղաքակիրթ աշխարհի ներկայացուցիչք, երբ մարդկային կեանքեր կ'զոհուին, Տէրութեանց առջեւ կ'տնկուի անձեռնմխելի պարտականութիւն մը։ Ահա այս պարտքն է զոր Հանրապետութեան կառավարութիւնը կ'կատարէ քաջութեամբ մը որ երախտագիտութեան միայն կրնայ արժանանալ։ Ամէն բան ըրած է որպէս զի արշաւանքը կարճ և վճռական ըլլայ։ Կ'փափաքի որ մեր զաւակներուն կեանքը խնայուի և քիչ ատենէն ետ դառնան իրենց յանձնուած փառաւոր պաշտօնն ի գլուխ հանելէ վերջ։ Խնդիրը նոր նուաճումներ ընելուն վրայ չէ, այլ անհրաժեշտ փոխարինութեան մը վրայ։ Ըսիք թէ Հանրապետութեան հիմնարկութեանց պահապանն եմ ես. այո՛, մինչ պահպանած եմ Հանրապետութիւնը, և բնաւ պիտի չմոռնամ զանիկա։ Ի՛նչ որ ալ ըլլան յարձակումները, բանութիւններն ու հայհոյանքները, վստահ եղի՛ք թէ իմ դիրքիս վրայ հաստատ պիտի մնամ և իմ կեանքս, կորովս, ամբողջ կամքս պիտի նուիրեմ Հանրապետութեան պաշտպանութեան և յառաջդիմութեան։»

Մեկնում Ֆրանսայէ զօրաց

Նախագահին մասնաւոր կառախումբին Մարսիլիայէ ի Բարիզ մեկնելէն երկու ժամ ետքը, Նաւահանգստէն մեկնեցաւ Բօլինեզիեն շոգենաւը, որ Չինաստան կ'տանի Վուարոն և Պայյու զօրավարները, ինչպէս նաև ֆրանսական արշաւախմբին սպայից մեծագոյն մասը։ Ժամ 5ին զօրավար Վուարոն շոգենաւ գնաց զօրավար Պայյուի և իր սպայակոյտի անդամոց հետ։ Ահագին բազմութիւն մը հանդիսատես էր այս զինուորական մեկնումին։ Երբ Բօլինեզիեն սկսաւ շարժիլ, ծափեր կ'թնդացնէին օդը, ցամաքէն կ'ցցնէին կ'պատասխանէին նաւուն յետնակողմը խռնուած զօրաց երգերուն։ Կէս գիշերին երկու շոգենաւեր եւս ճամբայ ելան զօրքերով և ռազմամթերքով լեցուած։ Միայն մէկ շոգենաւին մէջ կար 555 կենդանի ռազմանիւթ։

Մ. Տելքասէի պատասխանը

Դեսպանները Բեքինէ Դիէնձին ղրկուելու համար Զաունկ—լի—Եամէնի ըրած առաջարկին ի պատասխան, Մ. Տէլքասէ հետեւեալը հեռագրեց. —

«Ֆրանսական կառավարութիւնը չէ կրնար հրաման տալ իր դեսպանին Բեքինէ մեկնելու ցորչափ ճամբան ապահով չէ։ Եթէ այս պատճառաւ արկած մը պատահի, ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնայ չինական կառավարութեան վրայ։ Իր ստիպողական պարտքն է դեսպանները պաշտպանել իրեն չափ և նոյն իսկ իրմէ աւելի։ Եւ եթէ իրաւ է որ Չինու կառավարութիւնը շատ դժուարութիւն կ'քաշէ դեսպանները պաշտպանելու և ինքզինքն ալ պաշտպանելու ապստամբներուն դէմ, թո՛ղ հրամայէ իր զօրքերուն որ ետ քաշուին միջազգային զօրաց առջեւէն։ Միջազգային զօրքեր պատրաստ են և կարող են Դիէնձինէ մայրաքաղաք տանող ճամբան բանալ, և ի գլուխ հանել պաշտպանութեան գործն որ իրենց անկ է։ Չինական կառավարութիւնը պէտք է հասկնայ թէ իր ձեռք առած միջոցներուն անկեղծութիւնն ապացուցանելու և իր պատասխանատուութիւնը սահմանափակելու միակ միջոցն է միջազգային զօրաց առջեւ արգելք դնելը դադրեցընել։» Այս հեռագիր Բարիզի չինական դեսպանին յանձնուեցաւ չինական կառավարութեան փոխանցուելու համար։

Նոր Ծածկագիր Մ. Բիշոնի

«ԲԵՔԻՆ, 7 Օգս.— Չինացի զօրքերն Ցնս. 20էն մինչեւ Ցլս. 17 պաշարեցին, հրացանի բռնեցին և ռմբակոծեցին զմեզ։ Զօրս դեսպանատուն կրակի տրուեցան. Ֆրանսական դեսպանատան երեք—քառորդն ալ խոր տակուած է. բայց դեռ կ'դիմանանք աւստրօ-ֆրանսական ջոկատին դիւցազնական պաշտպանութեան շնորհիւ։ Մեր կորուստներն են 16 հոգի։ Ընդհանուր կորուստները՝ 60 հոգի։ 110 հոգի ալ վիրաւոր կան։ Բեքինի բոլոր կրօնական միսիոնարութեանց շէնքերը կրակի տրուած են, բաց ի Բէյթանկի մայր-եկեղեցիէն որ դեռ կանգուն է, բայց անոր բախտն ալ անստոյգ է։ Հակառակ տառապանքներու և զրկումներու, դեսպանատան պաշտօնեայք և հաւիրապետ Տարդի ողջ առողջ են։ Ռմբակոծումը դադրեցաւ Ցլս. 17ին, բայց Չինաց յարձակողական աշխատութիւնք, պատնէշները, և մերթ ընդ մերթ հրացանի հարուածները կ'շարունակեն՝ առանց սակայն կորուստ պատճառելու։ Չինական կառավարութիւնը կ'փորձէ անուղղակի կերպով բանակցիլ մեզ հետ Բեքինէ ճամբելու համար, բայց չենք կրնար մեկնիլ առանց իրենէն տարբեր պաշտպանութեան։ Մեր կարողութիւնը, մեր ռազմամթերքը, մեր ուտեստ սպառելու վրայ են։ Ընդհատուած յարձակումներ կրնան վերսկսիլ և չինական կառավարութեան ձեռքը մատնել զմեզ։ Ցուլիս 19ին հեռագիր մ'ընդունեցի մէջէ որուն ծածկագիր հեռագրելու չարտօնուեցայ։ Երախտագիտութիւնս կ'յայտնեմ կառավարութեան և Խորհրդարանին։ «ԲԻՇՕՆ»

ՖՐԱՄԷ ԹՈՐՓԻԼԱՆԱՒԸ

Հեռագիր մը ծանոյց թէ ֆրանսական Ֆրամէ Թորփիլանաւն ընդհարման մը հետեւանօք ընկղմած էր իր նաւազներուն կէսին հետ։ Այս արկած սխալ նաւուղղութեան մը հետեւանք է։ Միջերկրականի ֆրանս. նաւատորմը, իր ռազմափորձերէն վերջ, Թուլոն կը վերադառնար։ Ֆրամէ Թորփիլանաւը Պրէնիւս զրահապատ յածանաւին ձախ կողմէն կ'երթար և հաւանաբար իր ճամբան զինքը Պրէնիւսի վրայ կը տանէր, երբ հրամանատարը ուղելով հեռանալ, հրաման ըրաւ 20 աստիճան ձախակողմ երթալ։ Այս հրաման սխալ հասկցուեցաւ, և ղեկը ձախ երթալու տեղ աջ գնաց և ընդհարումը տեղի ունեցաւ, որ աղէտալի եղաւ փոքր նաւուն համար, որոյ զրահները խորտակուեցան։ 54 նաւազներէն 14ը միայն ազատուած են, որովհետեւ քնացած էին։

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐԵՐ

ԲԵՔԻՆԻ ԱՌՋԵՒ ՀԱՍԱԾ ԵՆ ԿԱՄ ԲԵՔԻՆ ՄՏԱԾ

ԼՈՆՏՈՆ, 16 Օգստ.— Այսօր առնուած հեռագրերը կ'հաստատեն թէ դաշնակից զօրքերը Բեքինի առջեւ հասած են։ Չինացիք շատ վհատեր են։

ԼՈՆՏՈՆ, 16 Օգստ. Տէյլի Էքսբրէս Շանկայէ հեռագիր մը հրատարակած է ծանուցանող թէ միջազգային զօրքերը Բշ. օր Բեքին մտած են։

— Շանկայէ հեռագիր մը կ'ըսէ թէ դեսպանատանց պաշար հայթայթող պաշտօնատարք սպաննուած են։

ԲԱՐԻԶ.— Բեքինի ամերիկեան դեսպանատունը նորէն հեռագրած է թէ դեսպանատանց կացութիւնը տագնապալի է։

ԼՈՆՏՈՆ, 16 Օգստ.— Շանկայէ հեռագիր մը կ'ըսէ թէ նոյն քաղաքին մէջ պտըտած զրոյցի մը նայելով, ճաբոնական 25,000 զօրք Քորէա պիտի երթան։

— Մէկ քանի հեռագիր կ'ծանուցանեն թէ Չինացւոց ապստամբութիւնը կ'աւելնայ Քեանկ—Սիի մէջ։

ՔՈՓԷՆՀԱԿ 16 Օգս.— Դանիոյ թագաւորը զէնքի և ռազմամթերքի արտածութիւնն արգիլեց Չինաստանի համար։

ԼՈՆՏՈՆ, 16 Օգստ.— Հեռագիրները կ'ծանուցանեն թէ զօրավար Տէվէթ նորէն փախաւ Անգլիացւոց հետապնդումէն, որք զինքը պաշարած էին, և դէպի հիւսիս ուղղուեցաւ. Տըլարէյ հրամանատարին զօրաց հետ միանալու համար, որոնց ձեռքն է Ռիւստէնպուրկը։ Զօրավար Քիչներ կ'շարունակէ հալածել զայն։

ՎԻԵՆՆԱ.— Միլան իշխան այսօր Վիեննա դարձաւ։

ԱՐՄՏԵԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ Կ. ՊՈԼՍՈՅ

Ցորեն.— Ութ օրուան մէջ ժամանեցին 4000 քիլէ Վառնա, 10000 Ռումէլիի երկաթուղիով, 8000 քիլէ Անատոլուի երկաթուղիով, 4000 քիլէ Սև ծով Անատոլ։ Կ'արժէ 7¼—8 ղրշ. Վառնա, Ռումէլիի երկաթուղիով եւ Անատոլուի երկաթուղիով ճերմակ, խառն. 8½—9½ լիպրայէն վար. կարծր 35—36 փր. օխան։

Գարի.— Կ'արժէ տեղական սպառման համար 10½—11 ղրշ. քիլէն։ Գարեջուրի Եւրոպայի համար կ'արժէ Անատոլ 25—27 փր. օխան։

Եգիպտացորեն.— 22½—23 փր. օխան. Աղեքսանդրիոյ համար անուանական. 8 օրուան մէջ վաճառուած չէ եղած։

Վարսակ.— 19½—20 փր. օխան անուանական. նոր ապրանքի վրայ գործ չէ եղած։

Թուրնեֆ.— 37—38 փր. օխան անուանական։

Սիսամ.— Կ'արժէ 108—110 փր. օխան, անուանական։

Ալիւր.— Ժամանեցին 1400 պարկ Օտեսա, 13000 պարկ Մարսիլիա, 800 պարկ Վառնա, 500 պարկ Սամսոն. Կ'արժէ՝ 83—103 ղշ. Օտեսա, 64—80 Մարսիլիա, 78—79 Վառնա, 65—73 Սամսոն, 68—77 ղրշ. տեղական քրմա պարկը։

Թէլ.— 16 փր. օխան։

2/15 Օգս. 1900.

ԱՂՋԿԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՈԼԷՃ
Ցիւսքիւտար

Սոյն Քոլէճի վերաբացումը տեղի պիտի ունենայ երեքշաբթի Սեպտ. 5/18ին. գիշերօթիկ աշակերտուհիք կ'սպասուին Սեպտ. 4/17ին։ Աշակերտաց ընդունելութեան համար պէտք է դիմել նամակաւ առ. Տնօրէնուհին, Տոքթոր Բաթրիք, Պոլիս Ամերիկեան Պայպլ—Հաուզի միջոցաւ. կամ Սեպտ. 3/16է վերջ վարժարան դիմելով։ 16—6

ԻՒՆԻՕ՛Ն
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՓԱՐԻԶ ՌԱՒԸ ՏԸ ԳԱՍԹԻԼԻՕՆ ԹԻՒ 15

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ
ՀԻՄՆԵԱԼ
1828



ԿԵՆԱՑ ՃԻՒՂ
ՀԻՄՆԵԱԼ
1829

Դրամագլուխ և պահեստք Ֆր. 94 Միլ.		Դրամագլուխ և պահեստք Ֆր. 135 Մի.	
Հասոյթ 1896 տարւոյ	» 18 »	Հատուցած վնասք	» 90 »
Հատուցած վնասք	» 215 »	Ապահովագրեալ գումարք	» 246 »

Ընկերութեան ընդհանուր գործակալն է ՕՍՄ ԿԱՑՍ. ՊԱՆՔԱՆ.
Թուրքիոյ գործակալութեան Տնօրէն Տ. ՍԻՄՈՆ ՔԱՑՍԷՐԼԵԱՆ
Կենաց ճիւղին տեսուչ Տ. ՄԻՀՐԱՆ ՏԷՐ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԵԱՆ
Կ. Պոլիս, Կալաթիա, Թահթապաշ Խան, Օսմ. Պանքային քով

ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԹԱԳՍԻՄԻ

Այս երեկոյ առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի

ՆԻԱԿԱՐԱՑԻ ԱՆՑՔԸ.

Հաւասարակշռութեան փորձեր տեղի պիտի ունենան նշանաւոր մարմնամարզներու կողմէ։

Մուտք 1 ղրշ.

Մ. Ժօզէֆ Բասլըի նոյն պարտէզին մէջ Մանկանց պարահանդէս մը պիտի տայ նորէն, ի նպաստ իրեն։

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

Երէկ, Լոնտոնի Օսմ. Քոնսոլիտէի գինը տասն փարա վեր գալուն պատճառաւ, ի Ղալաթիա մինչեւ 25. 5½ բարձրացաւ և կ'յուսացուէր որ Բարիզ ալ երեկոյին 45 սանդիմ գար, մինչդեռ 22½ սանդիմ միայն եկաւ, որուն ալ 5 սանդիմը Րէօտրի հաշւոյն է, Բարիզի կիսամսեայ հաշուեյարդարութեան առթիւ։ Հետեւաբար, մեր հրապարակին վրայ Օսմանեան Քոնսոլիտէն ծախուիլ սկսաւ, միայն Ցոյն սեղանաւոր մը հարիւր հազար Քոնսոլիտէ ծախելով։ Երեկոյին 25.¼ գոցուեցաւ և այս առաւօտ 25.1 բացուեցաւ, բայց հակամիտութիւնը լաւ է, և եթէ այսօր պաշտօնական հեռագիր գայ հաստատող միջազգային զօրքերու Բեքին մտնելը, նոր բարձրացում մը յուսալի է, կ'ըսուի։

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնս. Մէտ. Դէ.	Օ. Ո.	25 01
Ամէնէն բարձր գին	»	25 05½
Ամէնէն վար գին	»	25 ½
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	109 75
Ամէնէն բարձր գին		110 37½
Ամէնէն վար գին	»	109 75
Թրանսվալ	»	78 50
Ամէնէն բարձր գին	»	78 50

ԲԱՑՈՒՄ Օգոս. 3/16

Օսմ. Քոնս. Մէտ. Դ. Օ. Ո.		25 01
» » ժամ 4 ու կէսին		25 01½
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	109 62½
» » ժ. 4½ին		109 62½
Թումպաքի բաժնեթ.	ղրշ.	640 —
» պարտաթ.	Ֆր.	466 —
Տէրքոսի Ջուրի Ընկ.	Ֆր.	278 —
Քարտալ Կ. Պոլսոյ	»	465 —
Թրանսվալ	»	79 50
» ժ. 4 ու կէսին	»	79 50
Օսմ. Ապահովագր. Ընկ.	Օ. Ո.	4 20
Անատոլուի եկթ. պարտթ.	Ֆր.	496 —
» բաժնթ.	Ա. Ո.	8 35
Եգիպտ. Քրէտի Ֆոնսիէ	Ֆր.	261 50
Քարափ Իզմիրի	»	— —
Քէսի Ճէնէրալ ՕԹԹ.	Օ. Ո.	— —
Սօս. ՕԹ. Շանժ է Վալ.	Ա. Ո.	— —

ՍԹԻԼԱՆՑ

Քոնսոլիտէ մէկ օրուան	Օ. Ոսկի	1 10
» ութ օրուան	»	2 10
Ռումէլի Երկթ. »	Ֆր.	2 —

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 փրանքնոց	ղրշ.	87 22
Անգլիական ոսկի	»	110 —
Բոլ Էմբէրիալ	»	90 20
Մէճիտիէ ոսկին	»	108 —
Թալեր	»	51 05
Մէճիտիէ	»	97 —
Ռուպլի թղթադրամ	»	8 60

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

Լոնտոն 3 ամիս	Ղշ.	109 —
» » » Առեւտր. Թղթ.	»	108 ¾
» չէք	»	110 —
Բարիզ 3 ամիս Պնքյի Թղթ.	Ֆր.	23 —
» » » Առեւտր. Թղթ.	»	23 01¼
» չէք	»	22 85
Վիեննա մանտա 8 օր	քուրօն	22 05
Պերլին չէք	մարք	18 62
Օտեսա չէք	ռուպլ	08 58

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, 16 Օգոստ.

Օսմ. Քոնս. Մէտ. Բ.	Ա. Ո.	46 —
» » » Գ.	»	25 37
» » » Դ.) բաց.	»	22 75
) գոց.	»	22 75
Օսմ. Կայս. Պանքա	»	11 25
Եգիպտական միացեալ	»	103 —
Անգլ. Քոնսոլիտէ	»	98 93
Այտընի երկաթուղի	»	09 50
Փոխառութիւն Պաշտպ.	»	82 50
Իտալական Ռանթ 5 %	»	92 12
Հելլենական » » 1881	»	38 —
» » 1884	»	38 —
Մոնոփոլ Հելլենական 4 %	»	42 —
Պուլկ. փոխառթ. 1888	»	80 —
» նոր 6 % 1892	»	80 —
Փոխառ. Բարիզի վրայ	»	25 37½
Թրանսվալ	»	3 25
Դրամազեղչ	»	4 —

ՊԵՐԼԻՆ, 16 Օգոստ.

Օսմ. փոխառութիւն 1888	մարք	— —
Ռումէլիի Երկաթուղի	»	108 90
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 275
Դրամազեղչ	»	5 —

ԲԱՐԻԶ, 16 Օգոստ.

Օսմ. Քոնս. Մէտ. Դ.) բաց.	Ֆր.	23 22
) գոց.	»	23 22
» » » Գ.	»	25 65
Ռումէլիի Երկաթուղի	»	110 75
Օսմ. Կայս. Պանքա	»	532 —
Օսմանիյէ	»	435 —
Ֆրանս. Ռանթ 3 %	»	100 47
Քրէտի Լիօնէ	»	1092 —
Պանք տը Բարի	»	1039 —
Իտալական Ռանթ	»	92 70
Ջէք Լոնտոնի վրայ	»	25 170
Թրանսվալ	»	80 50
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՎԻԵՆՆԱ, 16 Օգոստ.

Փոխառ. Բարիզի վրայ	քուրօն	96 62
Ռումէլիի Երկաթուղի	»	106 —
Օսմ. Ռէնթ	»	286 50
» Լոնտոնի վրայ	»	242 40
Դրամազեղչ		4 ½

ՏՔԴ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
Մանկաբարձ, Նեարդաբոյժ և Մասնագէտ Ջղային հիւանդութեանց

Կ'դարմանէ ամէն տեսակ ներքին հիւանդութիւն, և ի մասնաւորի ջղային. նաև կանանց բոլոր հիւանդութիւնները։ Ելեկտրականութեամբ կը դարմանէ ջղային և գործարանաւորական հիւանդութիւններ՝ կատարելագործեալ մեթոտներով։ Կ'կատարէ ախտաճանաչութիւն Ռէօնդկէնեան ճառագայթներով, որ դրապէս կ'ցուցնէ [Radioscopie] ինչ որ աչքով անտեսանելի և սովորական քննութեամբ անհասկնալի է։ Ոսկրներու և ներքին գործարանաց հիւանդութիւններ, մարմնոյ մէջ գտնուած դրամ, ասեղ, կապար, կամ ներսը գոյացած քար, ուռ. եւն., ստամոքսի, աղիքներու, երիկամանց, սրտի և թոքերու հիւանդութիւնները, և թոքախտ իր բոլոր աստիճաններուն մէջ, մինչեւ իսկ վարակուելէ առաջ թոքերուն տրամադրութիւնը։ Ի պահանջել հարկին, սոյն հիւանդութեանց լուսանկարն հանելով (Radiographie) իբր հաստատուն փաստ հիւանդին կ'յանձնուի։ Հիւանդ կ'ընդունի կէս օրէ վերջ Բերա, Մէքթէպ—Պոյրում փողոց, 29 թիւ իր տունը։ Եշ. նոյն ժամերուն ձրի։ Պոլսոյ կողմի յաճախորդաց համար Բշ. և Ուր. կէս օրէ առաջ կ'գտնուի Գումգափու Սու—Թէրազի փողոց, 9 թիւ տունը։ 40—29

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

سالیبورین
SALIBORINE

ՍԱԼԻՊՕՐԻՆ
ՎԱՍԻԼԱՔԻ ԹԷՕՏՈՐԻՏԻ ՊԱԼԱՃԻ
[Դեղագործ]

Ընդդէմ ոտից գարշահոտութեան, բորբոքմանց և մատներուն մէջ գոյացած կոշտից.

Այս Սալիպօրին կոչուած փոշին առանց դադրեցնելու ոտից բնական քրտինքն՝ երկու կամ երեք անգամ միայն գործածելով անվտանգ կերպով բոլորովին ոտից գարշահոտութիւնն, բորբոքումն, մատներու մորթին կարծրացումն, մածուցիկ գարշահոտ հեղուկն և կեռալը կ'անհետացնէ։ Բաց աստի առանց ցաւ տալու՝ ոտից մատներու մէջտեղ գոյացող կարծրացեալ մորթերը կ'անհետացնէ և քրտինքին հոսումը կ'դիւրացնէ. Նաև սոյն Սալիպօրին կրնայ գործածուիլ ուսերու տակի և նոյնպէս ծածուկ տեղերու համար։

Գործածութեան եղանակն իւրաքանչիւր տուփի մէջ կ'գտնուի։

Կատարեալ բուժում միայն մէկ տուփով.

ԳԻՆ 5 ԴԱՀԵԿԱՆ

Ընդհ. կեդրոնատեղին է Վասիլաքի Թէօտորիտի դեղարանն ի Ճիպալի Նօ 55

Կ'ծախուի նաև՝ Պոն—Մարշէն և ամէն առաջնակարգ դեղարաններն և դեղօրէից մթերանոցներն ինչպէս նաև անուանի կօշկավաճառներու քով։

Գաւառներէ 6 ղրշ.ի բոլ ղրկողին առանց ծախքի իրեն կ'ղրկուի մէկ տուփ Սալիպօրին։ 30—14

ՌՈՒՑԱԳՐԱՒ ԲՈՒԺՈՒՄ ՄԸ

1897 Փետր. 17ին, Բարիզի գեղագործներէն մին հետեւեալ նամակն ստացաւ հիւանդէ մը. «Քանի մը տարի կայ որ անակնկալ ցրտառութեան հետեւանքով սաստիկ հազբուխի մը ենթարկուեցայ՝ և որ անհոգութեանս պատճառաւ սկսաւ օր ըստ օրէ սաստկանալ և վտանգաւոր հանգամանք մ'առնել. Այսօր սոսկալի ցնցղատապով (մի Պրոշիթ) կը տառապիմ, շնչառութիւնս ծանրացած է և բոլորովին յուսահատած եմ առողջութիւնս վերստանալէ, որովհետեւ սոսկալի ճնշման մը տակ եմ. Ստամոքսս խուխով ծանրաբեռնուած է և գիշերն ի բուն չթողուր որ քնանամ, Թոքերս մէջը լեցուն են. ամէն առաւօտ մէկ երկու ժամ կը հազամ ու կը թքնեմ, մինչև որ մեծ քանակութեամբ խուխս արտաքսեմ. Ձմեռները մանաւանդ խեղդ կը տառապիմ. Շատ անգամ փսխելս կուգայ և չեմ կրնար. Ամէն կարգի դարման, օշարակ դեղ փորձեցի. օգուտ մը չտեսայ, բժիշկներն ըսին որ վերջ ի վերջոյ ծանրաշնչութեան պիտի ենթարկուիմ. ախորժակ չունիմ և ոչ քանց մը համ կ'առնեմ.

Լրագրիս մէջ, ձեր խայծղանին (գաթրան) շնորհիւ ձեռք բերուած բժշկութիւններուն պատմութիւնը կարդացի, որոնք ճիշդ իմ հիւանդութեանս նման են, հաճեցէք շիշ մը բուն կիւեօի խայծղան ղրկել ինձ. քաջայոյս եմ որ այս դեղը օգտակար պիտի ըլլայ.

(Ստորագ.) ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐԹԻՆԷԹ Ապպէլի փողոց թիւ 14 Բարիզ.

Ճշմարիտ կիւեօի խայծղանը (գաթրան) գործածելէ վերջ Պ. Մարթինէթ հետեւեալ նոր նամակը կը գրէ

Բարիզ 15 Մայիս 1887
Սիրելի Պ. Կիւեօ

Գործածեցի այն խայծղանը զոր հաճած էիք ինձ ղրկել. ձեր պատուէրին համեմատ ամէն ճաշէ առաջ սուրճի գդալ մը լեցուցի անկէ ըմպելիքիս մէջ ու այնպէս խմեցի. Դեռ այս առաջին շիշին սկսելով նշանակութեան արժանի բարելաւութիւն մը նշմարեցի առողջութեանս մէջ. ստամոքսիս վրայ ճնշող խուխը շատ դիւրաւ արտաքսեցի և քանի մը ժամ կրցայ քնանալ առանց շնչահեղձութենէ նեղուելու. Շարունակելով կիւեօի խայծղանը գործածել, երրորդ շիշէն վերջ զիս չարչարող հիւանդութիւններն բոլորովին անհետացան. հիմա լաւ ախորժակ ունիմ. խուխերս վերջացան և ընդհանուր կերպով ոյժս ու առողջութիւնս վերստացած եմ.

Վերջին ծայր շնորհակալ եմ ձեզ, որ այս կիւեօի խայծղանին գիւտն ըրիք, և ուրիշ բան չեմ կրնար ընել, եթէ ոչ ջերմապէս յանձնարարել այս դեղը ամէն անոնց. որոնք ինձ նման կը տառապին հազէ, հարբուխէ, ցնցղատապէ և խուչափողի հիւանդութիւններէ.

Ստորագ. ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐԹԻՆԷԹ

Ամէն ճաշէ առաջ, նշանակուած չափով կիւեօի խայծղան գործածելուն փորձինքը վերի գրութենէն բացորոշ կերպով կը հասկցուի. Արդարեւ հազը, հարբուխն ու խուչափողի հիւանդութիւնները կարճ ժամանակի մէջ բուժելու համար այս խայծղանը բաւական է. Դեռ նոր սկսած թոքախտն իսկ բուժելու և անոր մահացու ընթացքը կասեցնելու համար կիւեօի խայծղանը եզական է, որովհետեւ թոքի բջիջներուն մէջ մնալով թոքախտ առաջ բերող մէքրոպները կը սպաննէ և թոքին կազմալուծումներուն արգելք կ'ըլլայ. — Արդարեւ շատ պարզ է.

Թէեւ հարբուխը անխնամ ձգուելով ցնցղատապի կրնայ փոխուիլ, ուստի թոքային հիւանդութեան մը առաջքն առնելու համար ջերմապէս կը յանձնարարուի կիւեօի խայծղան գործածել, հիւանդութեան սկիզբէն անմիջապէս յետոյ.

Երեսուն տարիէ ի վեր բազմաթիւ յուսահատ հիւանդներու կիւեօի խայծղանին շնորհիւ ստացած հրաշալի բուժումները մեծ հռչակ վաստկեցուցած են այս դեղին, ուստի շատ մը մրցակիցներ առիթէն օգտուելով կ'խաբեն հասարակութիւնն ու իրենց պատրաստածները կը ծախեն իբր ճշմարիտ կիւեօի խայծղան. Արդարեւ շատ մը գործարաններ կան որ ստորին տեսակ խայծղան կը գործածեն, և որոնց գիները թէև պակաս կարծեն, սակայն սա՛ որ հիւանդութիւնը չեն բժշկեր. Ուստի եթէ կ'ուզէք հիմնապէս բուժել ձեր հազը, հարբուխը, խուչափողի հիւանդութիւնները, ցնցղատապն ու մանաւանդ ծանրաշնչութիւնն ու թոքախտի սկզբնաւորութիւնը, մի մոռնաք Goudron Guyot ԿԻՒԵՕԻ ԽԱՅԾՂԱՆ փնտռեցէք դեղարաններն և ուշադրութիւն ըրէք որ [illegible] վրայ խոշոր գրերով տպուած ըլլայ Պ. Կիւեօի Guyot անունն ու ստորագրութիւնը երեք գոյներով [illegible]. Շիշերուն եփէթէփէ պէտք է կրէ նաև գործարանին հասցէն Maison Frère, 19 rue Jacob Paris,

1

1

ՌՈՊԵՐԴ ՔՈԼԷՃ

Սոյն Քոլէճ հաստատուած կայս. Բարձր Իրատէով, կազմակերպուած է Եւրոպեան ու Ամերիկեան նոյնօրինակ հաստատութեանց նման, ունենալով նշանաւոր դասատուաց կաճառ մը որով կ'կառավարուի. Նաև ընտիր և յաջողակ ուսուցիչներ՝ Հայերէն, Պուլկարերէն, Գաղիերէն, Գերմաներէն, Յունարէն և Թրքերէն լեզուաց համար. Ունի գրատուն մը, իբր 8000 հատորներէ բաղկացեալ, երկրաբանական, հանքաբանական, կենդանաբանական և բուսաբանական հաւաքածոներ, և բնագիտական, տարրաբանական, բնախօսական և այլ բազմաթիւ գործիներ.

Քոլէճին նպատակն է ժամանակակից պահանջմանց համաձայն բարձրագոյն կարգի կրթութիւն մը տալ իրեն դիմող երիտասարդաց. նոր տնօրինութիւնք եղած են բնական գիտութեան դիւրութիւններ ընծայելու համար.

Ռոպէրդ Քոլէճի մէջ աւանդեալ գրական և գիտական ուսմանց լեզուն Անգլիերէն է. սակայն իւրաքանչիւր ուսանող պարտաւորեալ է ուսանիլ իր մայրենի լեզուն և տոհմային պատմութիւնը. Հայերէն լեզուի և Դպրութեան համար գծուած է ուսման կատարեալ ընթացք մը որուն պիտի հետեւի իւրաքանչիւր Հայ ուսանող.

Հաստատութեան հոյակապ եւ քարուշէն շէնքերը կառուցուած են ի Ռումէլի Հիսար, Վոսփորի Եւրոպական կողմը գտնուող բերդերուն ետեւը բլրի մը վրայ, որուն դիրքը Վոսփորի ափանց վրայ գեղեցկագոյնն և ամէնէն առողջարարն համարուած է.

Քոլէճին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտեմբեր 15ին. Մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել առ Տնօրէնութիւնն, ի Ռումէլի Հիսար. 24—13

ԱԶԴ.—Յառաջիկայ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ Ս. Թագաւորի հրաշագործ Քեւեռին ուխտի դիմող բարեպաշտ ազգայիններու ի գիտութիւն կ'փութանք ծանուցանել թէ ուխտաւորաց գալու եւ վերադառնալու ատեն ամէն դիւրութիւն և հանգստութիւն տրուելու համար՝ յատուկ Կարգադիր Մասնախումբ մը կազմուած է, և արդէն ամէն նախահոգ միջոցներ ձեռք առնուած են այս մասին. Շոգենաւային զանազան ընկերութիւններ մրցման մէջ ըլլալով՝ շատ աժան կ'փոխադրեն ճամբորդները. Ի դիմաց Ս. Թագ. Թաղի Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Յովհ. Գասպարեան Սարգիս Խաչատրեան
Ռոտոսթօ, 26 Յլս. 1900. 4—4

ՏԱՏԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ Ի Մաքրիգիւղ

Թաղ. Խորհուրդս գիւղիս Տատեան ազգ. երկսեռ վարժարանին նոյնպէս և Մանկապարտէզին նոր զարկ մը տալու նպատակաւ, ուսուցչական ընտիր խումբ մը յաջողած է կազմել հետեւեալ ծանօթ ուսուցիչներէ.—

Տեարք Սիմոն Գաբամաճեան՝ Տնօրէն և ուսուցիչ հայ լեզուի. Գրիգոր Պիւքիւճեան՝ ընդհ. հսկող և ուսուցիչ մանչերու տարրական դասընթացքի. Պետրոս Կարապետեան՝ տաճկերէնի. Յովհաննէս Հինդլեան՝ Ֆրանսերէնի. Խաչիկ Ուզունեան՝ բնական գիտութեանց և ընդհ. պատմութեան. Արմենակ Պաղտատլեան՝ մաթեմաթիքայի և այլ ուսմանց. Խաչիկ Ինկիլիզեան՝ գծագրութեան և գեղագրութեան. Միքայէլ Քէչէճեան՝ ձայնագրութեան. Տիկին Ազնիւ Զաքըրեան՝ ընդհ. դաստիարակուհի և ուսուցչուհի ձեռական աշխատութեանց. Օրիորդք Զապէլ Զաքարեան՝ վարիչ մանկապարտէզի. Ֆիլօռ Բարսեղեան և Արաքսի Շահլեան՝ օգնական ուսուցչուհիք մանկապարտէզի.

Կրօնի դասն ըստ ոճայնոյն պիտի աւանդէ Արժ. Տէր Պետրոս քհնյ. Տէր Պետրոսեան. Խորհուրդս որոշած է կազմել բարձրագոյն դասընթացքի Ա. տարին թէ՛ մանչերուն և թէ աղջիկներուն համար, եթէ գէթ 5—6 աշակերտ արձանագրուին կազմելի դասարանին համար. Դաշնակի դասը կամաւոր է և մասնաւոր վճարում ընել հարկ է առ այն. Նախակրթարանի և մանկապարտէզի բացումը տեղի պիտի ունենայ Օգոստ. 15ին երեքշաբթի օր. Այժմէն սկսած են աշակերտաց և աշակերտուհեաց մուտքի գործողութիւնք, և ծնողք և պաշտպանք կ'հրաւիրուին կիրակի առաւօտները մինչեւ կէսօր վարժարան՝ մուտք տոմս ստանալու համար. Ի դիմաց առժ. Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Սարգիս Պ. Պէշէեան Միքայէլ Յարութիւնեան
Մաքրիգիւղ, 1 Օգս. 900. 3—3

ԱՂՋԿԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊՐՈՒՍԱ

Վարժարանիս նոր տարեշրջանը կը սկսի Սեպտ. 6ին [Ն. Տ.]. Տարեթոշակն է 12 ոսկի օսմ., կէսը կանխիկ և կէսը Փետր.ի սկիզբը վճարել. 12 մէճիտիյէ յաւելուածաբար կ'առնուի դաշնակի համար. Աւելի մանրամասն տեղեկութիւն ստանալու համար գրել առ Մարտիրոս էֆ. Նիկողոսեան Պրուսա. 25—14

ՌՕՍԻԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20 ի կայս. հրամանով հաստատեալ Ընկերութեան կեդրոնատեղին Պետերսպուրկ Ընկերութեան պաշտօնատունը, Մեծ Մորսքայա 37 Ապահովագրութեանց ճիւղեր ՀՐԴԵՀ. — ԿԵՆՔ. — ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ. — ԱՐԿԱԾՔ.

Երաշխաւորութեան գումար 121,765,333 ֆր.
1898 ի հասոյթք 34,775,462 »
1881 էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ 164,172,000 »


Ընկերութեան քննիչ ի Կ. Պոլիս Ա. [illegible] Ղալաթիա, [illegible] փողոց ([illegible]) Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար ԹԷՕՏՕՐ ՊԷՐԱՆՏ

ԱՆԱՐԻՒՆՈՒԹԻՒՆ

Ապացուցուած ճշմարտութիւն մ'է թէ, շատ մը հիւանդութեանց աղբիւրը արեան տկարացումն ու նուազումն է, Անարիւնութեան գլխաւոր նշաններն են, գլխի, աչքի կապիճներու եւ շրթունքներու գունատութիւնը, այս հիւանդութեան ենթակայ եղողը ընդհանուր անկարողութիւն եւ յոգնութիւն զգալով չ'ուզեր շարժիլ. ուտելու ախորժ չունենար եւ կերածն ալ դժուարաւ կը մարսէ եւ այս առթիւ հետզհետէ կը նիհարնայ. ստամոքսի խիթեր եւ սրտի բաբախում կը զգայ. Ո՛եւէ մէկըն որ անարիւնութեան ենթարկուի պէտք է, անմիջապէս դարմանի ձեռնարկէ. որովհետեւ անխնամ ձգելը շատ տխուր հետեւանքներ կը պատճառէ.

Անարիւնութիւնը մէկ դարման միայն ունի, ԵՐԿԱԹԱԽԱՌՆ ԴԵՂ, (չէլիք). Ամենուն ծանօթ է այս ճշմարտութիւն եւ անոր համար շատեր ջուրին յատակը մէկ քանի ժանգոտած քամ ձգելով կը խմեն այն ջուրը, երկաթախառն դեղ խմած ըլլալու համոզմամբ. մինչդեռ ասիկայ չոր մխիթարութենէ ուրիշ բանի չծառայեր. ԵՐԿԱԹՆ ազդեցութիւն ընելու համար պէտք է արեան եւ գործարաններու մէջ խառնուի, եթէ ոչ քիչ մը ազատ ջուր խմելով արդէն յոգնած ստամոքսը նեղելն ու չարչարելն ապարդիւն է.

Դարուս ամենամեծ բժիշկներէն մին՝ Տօքթ. Ռապիւթօ. որ ամբողջ ժամանակը գիւղօրէից մէջ երկաթին գործածութեան եղանակին ուսումնասիրելու յատկացուցած եւ այս առթիւ առաջին մրցանակ ստացած է Ֆրանսայի բժշկական Ակադեմիէն. վերջապէս յաջողած է պատրաստել ամենէն ազդու եւ դիւրամարս երկաթախառն դեղը ՏՐԱԺԷ ՌԱՊԻՒԹՕ եւ ԷԼԻՔՍԻՐ ՌԱՊԻՒԹՕ անուամբ. Այս դեղերէն քանի մը [illegible] անարիւնութիւնն ու անոր հետեւանքները հիմնապէս բուժելու. կը [illegible] գաւառներու մեծ դեղարանաց եւ դեղավաճառատանց մէջ. [illegible] ազդեցութիւնն հրաշալի է, կը յորդորեմ ծանր հիւանդութիւն [illegible], տկարակազմ եղողներն, յոգնածներն եւ կամ վատառողջ [illegible] մէջ ապրողներն անպատճառ գործածել Տօքթ. Ռապիւթօի Տրաժէն [illegible]



ՏՕՔԹ. ՏԷԼՄԻ

ՖՐԵՏ. ԼԷՅԼԱՆՏ ԵՒ ԸՆԿ.

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվերփուլ և Ամերիկայի միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Վիքդորիան	10500	Ֆլավիան	3500
Ամէրիքան	10500	Էճիփշեան	3500
[illegible]	10500	Բըրմիըն	3000
Լանքասդրիան	9000	Ալճէրիան	2500
Ֆիլատելֆիա	9000	[illegible]	35 0
Գոլըմպիան	8000	Աթենեան	2500
Ճորճիան	8000	Անտալուզեան	3500
[illegible]	8000	[illegible]	3500
[illegible]	8000	Լեսպիան	2000
[illegible]	3700	Մինիա	900
[illegible]	3700	Օսբրէյ	300
[illegible]	3700	Լիկեան	[illegible]
[illegible]	3500		

Ապրանքի տէրերէն կ'խնդրուի իրենց ապրանքը յղող փոխադրելու համար Ղալաթիոյ մաքսատանն [illegible] համար իրենց հրահանգը գրել շոգենաւին ժամանումէն 24 ժամ առաջ.

Աւելի տեղեկութեանց համար դիմել առ ԷՏՎԱՐ ԼԱՑՈՆԴԷՆ Մէճիտիյէ Ալի փաշա խան, թիւ 1 Ղալաթիա

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան 7 մէճտ. 6 ամս. 3½. 3 ամս 2 Մ. Կ. Պոլսոյ համար 3 ամս. 36 ղրշ. Արտասահման 40 Ֆր. 6 ամս 20, 3ամս 10. Թղթատարի ծախք մեր վրայ, բայց ի Բոսթ Լոքալ.

Կ. ՊՈԼՍՈՅ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

Բիւզանդիոնի Կ. Պոլսոյ համար եռամսեայ բաժանորդագինն է միայն 36 ղրշ. ամսական ճիշդ 12 ղրշ.ի հաշուով.

ԿԱՐԵՒՈՐ Է ԳԻՏՆԱԼ ԹԷ մեզի ղրկուած յօդուածները և այլն եթէ չորս ծայրերը կտրուած պահարանի մէջ դրուին, միայն 5 կամ 10 փարանոց փոսթայի փուլ փակցնել բաւական է համաձայն Թղթատարական օրէնքին.

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվերփուլ և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Մարիօտիս	5000	Թէպայըր	3000
Ֆայիլի	4500	Ֆէրօս	3000
Նայդօքրիս	4200	Օսմանլի	3000
Խէմէտիս	3500	Թիպա	2500
Րամիսիս	3500	Կասքօնի	1500
Մինիս	3500	Կիէն	1500
Ենիւպիս	3000		

Ֆէյզս շոգենաւը. Նաւագնաց Նէյլին կէն, ամսոյս դէպ ի 5ին Լիվերփուլէն հոս կ'սպասուի ընդհ. վաճառքով. Դիմել առ Ժ. Վ. Ուիթօլ և Ընկ. Ուիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ ԸՆԿ.
34, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ՍԻՆԱՆԵԱՆ


Վկայեալ Կայսերական Բժշկական Վարժարանէն

Իր դարմանատունը հաստատած է Սկիւտար, Սէլամսըզ, ճիշդ Փիրժօֆեան էֆ.ի վաճառատան դիմաց թիւ 391. Կ'դարմանէ բերնի ամէն տեսակ հիւանդութիւններ, ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու միջոցաւ, առանց ցաւի, ատամնահանութիւն կը կատարէ. Նուրբ և դիմացկուն արհեստական ակռաներ կ'պատրաստէ ճիշդ բնական ակռաներու նման, եւ փտած ակռաները կ'լեցնէ ոսկի, պլատին, արծաթ և ուրիշ նիւթերով. Երեքշաբթի կէս օրէն յետոյ աղքատները ձրի կ'ընդունի. 20—15


ՆԻՈՒ—ՀՈՄ

Ամերիկեան ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ կարի մեքենան որ բոլոր կարի մեքենաներուն հետ կ'մրցի

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ
ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ
ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ
ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ
ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ



Շիքակոյի, Բարիզի, Անվէրսի և բոլոր մեծ ցուցահանդէսներու կողմէ ստացած ոսկեայ մետալներն այս մեքենային գերազանցութիւնը կ'ապացուցանեն.



[Ոսկեզօծեալ [illegible]]

ՆԻՒ ՀՈՄ կ'կատարէ ամէն աշխատութիւն. Կ'կարէ էն հաստ ու էն բարակ կերպասներն ինչ որ ուրիշ ո՛չ մէկ մեքենայ կրնայ ընել. Անհրաժեշտ ամէն կօշկակարի, դերձակի ու ընտանիքի.

Թուրքիոյ համար միակ Ներկայացուցիչ՝ Որդիք ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ. — Պոլիս, Պահճէ Գաբու, Հավիտիյէ ճատտէսի, թիւ 7 ՄԱՍՆԱՃԻՒՂ. — Իզմիր Համիտիէ Ճատտէսի թիւ 39

Գնողներու համար վճարման դիւրութիւններ կան. — Մեքենայից գործածութեան եղանակին ուսուցումն և նորոգութիւնք ձրիապէս պիտի կատարուին վաճառատանս կողմէ.

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՕՐԷՆՔԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդուած Ա.—Օսմ. երկիրներու մէջ գտնուող ամէն դասակարգի անձ պարտաւոր է ինքզինքն արձանագրել տալ մարդահամարի վարչութեան.

Յօդ. Բ.—Մարդահամարի տոմարներուն մէջ պիտի արձանագրուին. 1. Այրերուն և կիներուն անունն ու մականունը, ինչպէս նաեւ անոնց հօր և մօր անունները, բնակութեան տեղը. 2. Ծնած տեղը ու թուականը. 3. Ազգայնութիւնը. 4. Արհեստը, հանգամանքը, ծառայութիւնը և ապրելու եղանակը. 5. Այրերուն դէմքին և աչքերուն գոյնը, իսկ քսան տարեկանէ վեր եղողներուն հասակը, աչքի զանազան ձեւերը, բերնի ծռութիւնը, դէմքի ծաղկաւոր ըլլալը, մեծ պալարներու հետքերը, ձախլիկութիւնը, կաղութիւնը, կուրծքի և կռնակի սապատները եւ ասոնց նման դուրսէն երեւցող թերութիւնները. 6. Ամուսնացած ըլլալը կամ չըլլալը, իսկ եթէ ամուսնացած է, քանի՛ կին ունենալը, անոնց հօր եւ մօր ողջ ըլլալը. 7. Զինուորական ծառայութեան զանազան աստիճանները և անոնց որո՛ւն վերաբերիլը, եթէ ասոնք մարդահամարի տոմարներուն մէջ արձանագրուած են արդէն, անոնց արձանագրութեան թուականը պիտի նշանակուի. եւ այս արձանագրութիւնք իրարմէ տարբեր պիտի ըլլան իսլամ հպատակներու եւ ոչ-իսլամ հպատակներու իւրաքանչիւր հասարակութեան համար. իսկ օտար հպատակներու համար ալ տարբեր.

Յօդ. Գ.—Մարդահամարի տոմարներու մէջ արձանագրուած օսմ. հպատակներուն պիտի տրուի թէզքէրէ մը, որուն վրայ Բ. յօդուածին տրամադրութեանց համաձայն, պէտք է կատարուած ըլլան բոլոր օրինական գործողութիւնները. Նաեւ այդ թէզքէրէն տպագրուած պէտք է ըլլայ եւ իր վրայ կրէ Կայս. Թուղրան. այս թէզքէրէներուն վրայ ծննդեան թուականները պիտի նշանակուին թէ՛ լուսնային եւ թէ ելմտական տարեթուով.

Յօդ. Դ.—Նուֆուս թէզքէրէսիներուն ետեւը պիտի կնքուի Պոլսոյ ընդհանուր վարչութեան դիւանին յատուկ կնիքովը, իսկ նահանգներու եւ գաւառներու մէջ ալ մարդահամարի վարչութեան եւ թէզքէրէն տրուած պահուն գաւառակներու մարդահամարի տեսչութեան պաշտօնական կնիքներովը պիտի կնքուին.

Յօդ. Ե.—Ամէն օսմ. հպատակ երբ անշարժ կալուած մը կ'ծախէ եւ կամ կ'փոխանցէ, երբ պաշտօնի մը գլուխ կ'անցնի կամ ծառայութեան կ'մտնէ, երբ դպրոց կ'մտնէ, երբ հանգստեան ու անպաշտօն վիճակի թոշակի կ'արժանանայ, երբ միւրիւր թէզքէրէսի կամ բասբօռ առնելու կ'ներկայանայ, նաեւ երբ կ'ամուսնանայ, պարտաւոր է իր նուֆուս թէզքէրէսին ցոյց տալ. հակառակ պարագային, իրենց գործերու կարգադրութիւնը պիտի յետաձգուի, մինչեւ որ իրենց արձանագրութիւնը կատարուի մարդահամարի տոմարներուն մէջ. Թէզքէրէի Օսմանիէն կեղծողները կամ փոխողները ու նմանօրինակ կեղծ թէզքէրէները գիտութեամբ գործածողները պատժական Օրէնքին 157րդ յօդուածին համաձայն, մէկ տարիէն մինչեւ երեք տարի բանտարկութեան պիտի դատապարտուին.

Յօդ. Զ.—Արձանագրութեան տոմարներուն իւրաքանչիւր էջերը, որոնք թուաւոր եւ կնքուած պիտի ըլլան, պիտի պարունակեն գաւառ, գաւառակներու, ամուսնութեան, մահերու, բնակարանի փոփոխման և զինուորական գործողութիւններու համար.

Յօդ. Է.—Իւրաքանչիւր մարդահամարի արձանագրութիւնը, նոյն տարուան վերջը, յաւելուածով պիտի յանձնուի գաւառակին խոտարէի ժողովին. Այս վերջիններն էջերուն թիւը և ամբողջ թուականը անոր վրայ գրելէ ետք կը կնքէ ու կ'պահէ.

Յօդ. Ը.—Եթէ աղերսագրով դիմում ըլլայ մարդահամարի վարչութեան, կորսուած նուֆուս թէզքէրէի մը տեղ նորը ստանալու. արձանագրութեան համաձայն նորը կ'տրուի. Այդ պարագան կ'արձանագրուի թէզքէրէին վրայ ու արձանագրութեան տոմարին մէջ. բայց դիմողին անձը եթէ անծանօթ է մարդահամարի պաշտօնէութեան, ըստ օրինի իլմուխապէր պէտք կ'պահանջուի և առանց անոր, լոկ աղերսագրով նորէն նուֆուս թէզքէրէսի չի տրուիր.

Յօդ. Թ.—Գաւառակէ մը ուրիշ գաւառակ փոխադրուած և հոն արձանագրուած անձ մը եթէ Օսմանիէ թէզքէրէսին կորսնցնէ. նախորդ յօդուածին տրամադրութեան համաձայն. դիմում պիտի ընէ և այն ատեն նորէն ուրիշ թէզքէրէ մը պիտի տրուի անոր. Իսկ անոնցմէ որ իրենց բնակութիւնը փոխադրած ըլլալը արձանագրել չտուած իրենց Օսմանիէ թէզքէրէսին կորսնցնեն և ուրիշ մը ուզեն, նախ քանը հինգ ղրշ. դրամական տուգանք կ'առնուի. յետոյ անոր արձանագրուած տեղին մարդահամարի տեսչութենէն վաւերական գիր մը բերել կ'տրուի և ապա ըստ այնմ ուրիշ մը կ'տրուի.

Յօդ. Ժ.— Ոչ-իսլամ հասարակութեանց մէկէն միւսը փոխադրուողները պէտք է իրենց նոր ընդգրկած կրօնքին պատրիարքարանին կամ խախամբաշիին կողմէ իլմուխապէր մը բերեն. մարդահամարի վարչութիւններն ալ ըստ այնմ պիտի կատարեն արձանագրական գործողութիւնները.

Յօդ. ԺԱ.—Մարդահամարի արձանագրութեան տոմարին մէջ նշանակուած իսլամ և ոչ-իսլամ ամէն անհատ իրաւունք ունի աղերսագրով մը խնդրել որ իր տարիքը ուղղուի. Այդ դիմումները գաւառներու մէջ զինուորագրութեան ժողովներու առջեւ եղած յայտարարութեանց և անոնց կողմէ կատարուած քննութեանց արդիւնքին համեմատ ընդունելի կ'ըլլան. Այդ պարագային տարիքի ուղղումը կարելի կ'ըլլայ. Կ. Պոլսոյ մէջ այդ կարգի դիմումներ ընդունելի կ'ըլլան, երբ իրենց բնակած թաղին կողմէ իլմուխապէր մը ցոյց տան և, եթէ գաւառացի են, նոյն տեղէն վաւերական գիր մը բերեն. Բաղդատութեան Խորհուրդը թէ՛ այդ գիրերը և թէ վկաներու յայտարարութիւնները նկատողութեան կ'առնէ, յետոյ Պետական Խորհուրդին Ներքին ճիւղը որոշում մը կուտայ և այդպէս աղերսագիրը ընդունելով, տարիքի սրբագրութիւնը կ'կատարուի արձանագրութեան տոմարին մէջ.

Յօդ. ԺԲ.—Մարդահամարի գործողութեանց յատուկ տպագրեալ իլմուխապէրներէն զատ, գիւղերու և թաղերու մուխթարներուն կողմէ մարդահամարի գործողութեանց համար պարզ թուղթերու վրայ գրուած ու տրուած իլմուխապէրներուն համար, իմամները, մուխթարները և ոչ-իսլամ հասարակութեանց պաշտօնեաները երբեք ղրշ. վարձք միայն պիտի ստանան. Այդ կարգի իլմուխապէրներուն վրայ մէկ ղրշ.նոց դրոշմաթուղթ պիտի փակցուի՝ փոխարժէքը տիրոջմէն առնելու պայմանով.

Յօդ. ԺԳ.—Մանուկներու, ամուսնութեանց և բնակութեան փոփոխութեան վերաբերեալ իլմուխապէր մը եթէ կորսուի, օրինական ծախքը կորսնցնողէն պիտի գանձուի. Մահերու և ամուսնալուծութեանց իլմուխապէրներն ալ երբ կորսուին, կորսնցնողէն իւրաքանչիւրին համար տասը փարա պիտի առնուի իբրև տպագրութեան ծախք.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մարդահամարի կեդր. վարչութեան կազմակերպութիւնը, պարտականութիւնները և արձանագրութեանց տետրակներուն առաջման եղանակը.

Յօդ. ԺԴ.—Մարդահամարի վարչութեան վերին մարմինը պիտի ըլլայ Ներքին գործոց նախարարութիւնը, որուն իրաւասութեան տակ պիտի գտնուին ընդհ. տնօրէն մը և օգնական մը, նոյնպէս այս վարչութեան պիտի կցուին ընդհ. մարդահամարի դիւանները.

Յօդ. ԺԵ.—Գաւառակներու մէջ մարդահամարի մէկ մէկ պաշտօնեայ և անոր իրաւասութեան տակ մէկ մէկ քարտուղար պիտի գտնուին. իսկ գաւառակներու և Ներքին գործոց նախարարութեան միջոցաւ կառավարուող կառավարչութեանց մէջ մարդահամարի մէկ մէկ տեսուչ և Ա. և Բ. քարտուղարներ. ի հարկին այս վերջիններուն թիւը պիտի աւելցուի կայս. կառավարութեան կողմէ.

(Շար.)

Ի դիմաց Թերթին կ'ստորագրէ մի միայն
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆՆ
Առ որ կ'ուղղուին ամէն գրութիւնք

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» ՕՐԱԳՐՈՑ
Կ. Պոլ., Nº 23, Պաղ. Ալի Ճատտ.